# ՄԱԿ-Ի ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԿՈՄԻՏԵԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ. ԶԵԿՈՒՅՑ

# ՄԱԿ-Ի ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԿՈՄԻՏԵԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ. ՋԵԿՈՒՅՑ

Երևան

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2022

# ՄԱԿ-Ի ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԿՈՄԻՏԵԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ. ՁԵԿՈՒՅՑ

**Հեղինակ՝ Նարինե Սոլոմոնյան**

**Խմբագիրներ՝ Անժելա Ավագյան, Նիկոլայ Հովհաննիսյան**

Այս հրապարակումը պատրաստվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատարի գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի կողմից ՄԱԿ-ի Եզրափակիչ դիտարկումների իրականացման վերլուծություն և իրազեկվածության բարձրացում» նախագծի շրջանակներում: Նախագծի նպատակն է խթանել ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը և բարելավել պետության քաղաքականության համապատասխանությունը մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերին:

**Բովանդակություն**

Նախաբան ..... 5

ՄԱՍ 1. ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ..... 9

ՄԱՍ 2. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ..... 14

ՄԱՍ 3. ԵՐԵԽԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ..... 23

ՄԱՍ 4. ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ..... 28

ՄԱՍ 5. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ ..... 34

ՄԱՍ 6. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ, ՏԱՐՐԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ..... 40

ՄԱՍ 7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՄԱՆՑԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.. 49

ՄԱՍ 8. ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ ..... 54

ԱՄՓՈՓՈՒՄ ..... 67

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 69

ՀԱՎԵԼՎԱԾ 1 ..... 72

ՀԱՎԵԼՎԱԾ 2 ..... 73

ՀԱՎԵԼՎԱԾ 3 ..... 74

ՀԱՎԵԼՎԱԾ 4 ..... 75

Օգտագործված աղբյուրների ցանկ ..... 76

**Նախաբան**

ՄԱԿ-ի երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի՝ Հայաստանին ուղղված եզրափակիչ դիտարկումների կատարման ընթացքի վերաբերյալ ուսումնասիրությունը նպատակ ունի վեր հանել Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը և կատարված հետազոտության հիման վրա ներկայացնել առաջարկություններ մասամբ կատարված կամ չկատարված պարտավորությունների կատարման ուղղությամբ:

Հետազոտության շրջանակներում իրականացվել է ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեի ընդունած երեք դիտարկումներում ամրագրված առաջարկությունների կատարման ընթացքի հետազոտություն: Հաշվի առնելով, որ Կոմիտեի վերջին դիտարկումներն ամփոփում են նախորդ երկուսի հիմնական շեշտադրումները, առաջարկություններն առավելապես արվել են 2013 թվականին ընդունված եզրափակիչ դիտարկումների վերաբերյալ:

Հետազոտության մեջ ընդգրկված թեմատիկ ուղղությունները կատարվել են Կոմիտեի եզրափակիչ դիտարկումների կառուցվքածքին համապատասխան՝ հետագայում իրավասու մարմինների հետ թեմատիկ իդենտիֆիկացման ապահովման ու կառուցողական համագործակցության նպատակով:

ՄԱԿ-ի երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներով Հայաստանին ուղղված առաջարկությունների շրջանակը, դրանց կատարման ընթացքը, առաջացած խնդիրները հետազոտվել և ներկայացվում է հետևյալ հարցերի համատեքստում.

1. *Համապարփակ քաղաքականության, համակարգման ու ռեսուրսների բաշխման հետ կապված հարցեր*

Նշված հարցի շրջանակներում ուսումնասիրվել և գնահատվել են երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագրերում՝ Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայում ամրագրված իրավունքների ընդգրկվածության ընդհանուր տրամաբանությունը և աստիճանը: Երեխայի իրավունքների վերաբերյալ ռազմավարական ծրագրերի կատարման արդյունավետության գնահատման նպատակով հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվել ռազմավարության միջանկյալ և ամփոփիչ արդյունքներին:
Համակարգման հարցերին անդրադարձ է կատարվել երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեության համատեքստում: Քննարկվել են հանձնաժողովի գործունեության արդյունավետությանն ուղղված՝ Կոմիտեի առաջարկությունները, ներառյալ՝ ազգային հանձնաժողովի ղեկավարումը փոխվարչապետին վերապահելու առաջարկությունը: Ուսումնասիրության շրջանակներում կարևորվել է նաև բյուջետային հատկացումների վերաբերյալ հարցերին անդրադարձը՝ հենվելով բյուջետային հատկացումների կրճատումների վերաբերյալ առկա վիճակին և զարգացումներին:

2. *Խտրականության արգելքի սկզբունքի կիրառում*

Խտրականության որոշ տեսակների դրսևորումների առումով (օրինակ՝ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը) հարկ է ընդգծել ոչ միայն օրենսդրական փոփոխությունների կատարումը, այլև իրական պատկերի փոփոխությունը: Սակայն, ավելի երկար ու կայուն արդյունքների ապահովման համար, ինչպես իրավակիրառ

պրակտիկան է վկայում, անհրաժեշտ են օրենսդրական արգելքին զուգահեռ շարունակական ռազմավարական մոտեցումների, կարծրատիպերի փոփոխմանն ուղղված պրակտիկ միջոցառումներ: Համադրվել է նորածինների սեռերի հարաբերակցության վերաբերյալ վիճակագրական պատկերն ու վարչական միջոցառումների արդյունավետությունը՝ հիմք ընդունելով այս առնչությամբ միջազգային լավագույն փորձն ու միջազգային չափորոշիչները:

Խտրականության դրսևորումների շրջանակներում են նաև խոցելի և առավել անբարենպաստ իրավիճակներում հայտնված երեխաների տարբեր խմբերը, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող երեխաները, ՄԻԱՎ-ով ապրող երեխաները, կարիքավոր ընտանիքների երեխաները, գյուղական բնակավայրերում ապրող երեխաները, փողոցային իրավիճակներում հայտնված և հաստատություններում ապրող երեխաները:

Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման վերաբերյալ Կոմիտեի առաջարկությունները մեծամասամբ կատարվել են, սակայն առկա են խտրականության մյուս տեսակների վերաբերյալ մասնակի կատարված պարտավորություններ, որոնց պատճառների բացահայտման ու վերլուծության նպատակով հարցազրույցներ կվարվեն համապատասխան պետական իրավասու մարմինների հետ:

*3. Երեխայի լավագույն շահի ապահովումը*

Երեխայի լավագույն շահ հասկացությանը սահմանադրահիրավական կարգավիճակ հաղորդելը, ինչպես նաև վերջինիս ճյուղային ամրագրումը վկայում են պետության իրական կամքի առկայության մասին: Այնուամենայնիվ, օրենսդրական փոփոխություններին զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել վարչական միջոցառումներ, որոնք ուղղված են երեխայի լավագույն շահի պաշտպանությանը ցանկացած իրավիճակում: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են, թե որքանով են իրականացված օրենսդրական փոփոխությունները համապատասխանում Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի պահանջներին:

Հաշվի առնելով, որ «երեխայի լավագույն շահ» հասկացության կիրառման ուղղությամբ ձևավորվել է դատական պրակտիկա, հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են նաև ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները՝ կապված երեխայի «լավագույն շահ սկզբունք»-ի լայն և միասնական կիրառման հետ:

*4. Երեխայի նկատմամբ բռնության բացառումը*

Կոմիտեի մտահոգության շրջանակում է երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի ու բռնության դրսևորումը հատկապես փակ և մասնակի փակ հաստատություններում: Միաժամանակ, բռնության դրսևորումները ակնհայտ են ընտանիքում, հանրակրթական հաստատություններում, որոնք Կոմիտեի եզրափակիչ դիտարկումներում մատնանշվել են, և այս ուղղությամբ էական քայլ է արվել՝ ի դեմս «Ընտանիքում բռնության **կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և** ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունման: Այնուամենայնիվ, խնդիրները դեռ առկա են, որոնց մի մասը վերաբերում է ծնողի կողմից երեխայի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքով կիրառվելիք

պատասխանատվության տեսակների ու պատժատեսակների սահմանափակ բնույթին, մյուս մասը՝ համայնքահեն կառույցների սակավությանը և այլն:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են նաև եզդիական Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների առողջության, կրթության և զարգացման իրավունքի նկատմամբ վաղ ամուսնությունների բացասական հետևանքների վերաբերյալ ոլորտային հետազոտությունները:

*5. Ընտանեկան միջավայրը և այլընտրանքային խնամքը*

Կոմիտեի կողմից ընտանեկան միջավայրի և այլընտրանքային խնամքի վերաբերյալ արված առաջարկությունների կատարման ուղղությամբ պետությունը ներդրել է ինտեգրված սոցիալական ծառայությունների և սոցիալական աշխատողի ինստիտուտը, որն ուղղված է ընտանիքներին, սոցիալական հատուկ խմբերին և անձանց նպատակային աջակցության տրամադրմանը: Ըստ Կոմիտեի գնահատման կատարված փոփոխությունների շրջանակից դուրս են մնացել հարցեր կապված՝ երեխայի խնամքի՝ ընտանիքից դուրս ժամանակավոր կազմակերպման հետ, երեխայի ժամանակավոր խնամքի կազմակերպման հարցում ծնողի համաձայնության անհրաժեշտության հետ, իրավասու մարմինների լիազորությունների շրջանակի հստակեցման հետ և այլն: Կոմիտեի մեկ այլ մտահոգություն վերաբերում է որդեգրման ինստիտուտին: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են Կոմիտեի կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ վերջին զարգացումները:

*6. Հաշմանդամության, տարրական առողջության և բարեկեցության հետ կապված հարցեր*

Ներառական հանրակրթության վերաբերյալ հետազոտության շրջանակներում ուսումնասիրվելու են Կոմիտեի առաջարկությունների կատարման նպատակով կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունավետությունը և առաջացած խնդիրները: Օրենսդրական վերաբերելի ակտերն են՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքը, «Հանրակրթության մասին» օրենքում 2014 թվականին կատարված փոփոխությունները, ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն որոշումը և այլ ակտեր: Ուսումնասիրվել են նաև առողջության և աջողջապահական ծառայությունների, քաղաքական և գյուղական համայնքներում առողջապահական ծառայությունների հասանելիության, նեոնատալ և պերինատալ մահացության բարձր ցուցանիշների, ոչ պաշտոնական վճարումների, կանանց և երեխաների շրջանում թերսնուցման և կենսամակարդակի հետ կապված Կոմիտեի կողմից արված առաջարկությունների կատարման պատկերը՝ ըստ օրենսդրական, վարչական և պրակտիկ ցուցանիշների/ցուցիչների:

*7. Կրթությունը, ժամանցը և մշակութային միջոցառումները*

Զեկույցն անդրադառնում է հանրակրթական ուսումնական հաստատությունների, հատկապես՝ նախակրթական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքների անբավարար պայմաններին, այդ թվում՝ ջեռուցման, ջրի և սանիտարահիգիենիկ

պայմանների անբավարարությանը, կրթության ցածր որակին, դպրոցներից դուրս մնացողների տոկոսային բարձր ցուցանիշին, դպրոցների ուսումական ծրագրերի շրջանակում երկրում առավել տարածված կրոնի ուսուցմանը որպես պարտադիր առարկա:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են բյուջետային հատկացումները, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում կատարված փոփոխությունները և վերաբերելի այլ հարցերի բարձրացման ընթացքը տարբեր մակարդակներում:

*8. Հատուկ պաշտպանության այլ միջոցները*

Հատուկ պաշտպանության այլ միջոցների շրջանակներում ուսումնասիրվել են 2008թ.-ին «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսվում են առանց ուղեկցողի փախստական երեխաների և ապաստան հայցող երեխաների պաշտպանության հիմնարար երաշխիքները, ինչպես նաև 2016թ.-ին նշված օրենքում կատարված փոփոխությունները, որով ամրագրվել են էապես նոր (կոնվենցիոն) մոտեցումներ՝ առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների կարգավիճակի և դրանից բխող երաշխիքների վերաբերյալ: Ուսումնասիրության առարկա է դարձվել նաև փախստական և ապաստան հայցող երեխաների կրթության հասանելիության հարցը:

Անչափահասների արդարադատության վերաբերյալ Կոմիտեի առաջարկությունները ուսումնասիրվեն են Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն կանոնների, Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշների, քրեական, քրեական դատավարության օրենսգրքերի, ռազմավարական ծրագրերի հետ համադրության, ինչպես նաև մշտադիտարկման մարմինների ստեղծման ու գործառնության համատեքստում:

Հետազոտության արդյունքում կատարված առաջարկությունները կարևոր են երեխայի իրավունքների վերաբերյալ ՀՀ ստանձնած պարտավորությունների բարեխիղճ ու շարունակական կատարման, ինչպես նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին ներկայացվելիք հետագա զեկույցները նախապատրաստելու առումով:

*Բանալի բառեր - երեխայի իրավունք, խտրականություն, խտրականություն խոցելի խմբերի նկատմամբ, կրթություն, առողջություն և առողջապահական ծառայություններ, հաշմանդամություն, հաշմանդամություն ունեցող երեխայի կրթության իրավունք, ներառական կրթություն, երեխայի լսված լինելու իրավունք, երեխայի լավագույն շահ, երեխաների նկատմամբ բռնության բացառում, պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատում, անչափահասների գործերով արդարադատության իրականացում*

## ՄԱՍ 1. ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Համապարփակ քաղաքականության, համակարգման և ռեսուրսների վերաբերյալ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի (այսուհետ՝ նաև Կոմիտե) հայտնած մտահոգություններն ու առաջարկությունները[1] հիմնականում վերաբերում են.

1. ռազմավարական ծրագրերի և դրանց գնահատման կառուցակարգերի արդյունավետությանը.
2. համակարգող մարմնի գործունեության արդյունավետության բարձրացմանը.
3. բյուջետային հատկացումների ավելացման և թափանցիկության ապահովմանը.
4. մշտադիտարկող մարմնի դերի բարձրացմանն ու անկախության երաշխիքների ապահովմանը:

1. ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ ընդունված ռազմավարական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ Կոմիտեն առանձնացրել է հետևյալ խնդիրները.

- ռազմավարական ծրագրերի կատարման ֆինանսական ապահովման նվազագույն մակարդակ (իրականացումը հիմնականում պայմանավորված է միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ).

- ռազմավարական ծրագրերի կատարողական առաջընթացի պարբերական գնահատման բաց:

Ի տարբերություն նախորդ ռազմավարական ծրագրերի[2]՝ ՀՀ կառավարության 2017 թ. հուլիսի 13-ի N 30 արձանագրային որոշմամբ ընդունված՝ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի ժամանակացույցով նախատեսված 71 միջոցառումից 38-ը օրենքով չարգելված աղբյուրներից է նախատեսում ֆինանսավորումը[3]: Նշված ռազմավարությունը, սակայն, չունի հստակ բյուջետային գնահատում, ինչը հնարավորություն չի տալիս տեսնել, թե ինչ միջոցներ

[1]Տե՛ս Concluding observations on the combined third and fourth periodic reports of Armenia, adopted by the Committee at its sixty-third session (27 May – 14 June 2013), 14 June 2013, Committee on the Rights of the Child https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf , Կոմիտեի առաջարկությունների 11-րդ, 13-րդ, 15-րդ և 17-րդ կետեր:

[2] 2003 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին» N 1745-Ն որոշում, ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 206-Ն որոշմամբ հաստատված՝ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարություն, 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշում:

[3] Հարկ է նշել, որ Երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցով նախատեսված 84 գործողությունից 41-ով նախատեսվում է օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսավորում:

են հարկավոր ռազմավարությունն իրականացնելու համար: Ի հավելումն՝ չի պարունակում բոլոր գործողությունները, այսինքն՝ չեն երևում բոլոր երեխաներին ուղղված ծախսերը և միջոցառումները՝ ըստ իրավունքների[4]:

Ռազմավարական ծրագրի գնահատման կառուցակարգի ապահովման առումով էական քայլ է Ռազմավարական ծրագրում Մշտադիտարկման և գնահատման առանձին բաժնի ամրագրումը[5]: Ընդ որում՝ գնահատումը պետք է հիմնվի մի քանի աղբյուրի, այն է՝ մշտադիտարկման և գնահատման, այլընտրանքային հետազոտությունների, պաշտոնական վիճակագրական տվյալների վերլուծության վրա, որոնց դրական արդյունքները և քաղած դասերը կօգտագործվեն տվյալ ռազմավարության շրջանակներում իրականացված ծրագրային միջոցառումների արդյունավետության գնահատման և հետագա զարգացումների ապահովման նպատակով»[6]:

2. Համակարգման ուղղությամբ կատարվել են ինստիտուցիոնալ, միջգերատեսչական, իրավակարգավորիչ քայլեր: 2005 թ. որպես համակարգող մարմին ստեղծվեց Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը (ԵԻՊԱՀ): Այս հանձնաժողովը, սակայն, ակտիվ չի գործել, 2018 թ. դրությամբ այն պարբերական նիստեր չի գումարել, նրա գործունեությունը, սկսած 2013 թ., չի արտացոլվել ԵԻՊԱՀ կայքում և այլն[7]: Հանձնաժողովի ոչ ակտիվ գործունեության հետ կապված՝ ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) ներկայացրած տվյալների, Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի նիստերը, համաձայն ՀՀ կառավարության որոշման, իրականացվում են կիսամյակը մեկ անգամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովի գործունեությունը կարգավորող իրավական ակտի լիազորող նորմը բացակայում էր, նախարարությունը ձեռնարկել է օրենքում համապատասխան ամրագրում իրականացնելու նպատակով օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծ կազմելուն ուղղված աշխատանքներ, ինչի արդյունքում առաջիկայում փոփոխություն կիրականացվի նաև ենթաօրենսդրական իրավական ակտում, որից հետո կգումարվի հանձնաժողովի հերթական նիստը[8]:

Որպես միջգերատեսչական համակարգման փորձ՝ հարկ է նշել *Անչափահասների արդարադատության մատչելիության խորհրդի ստեղծումը*, որն արդարադատության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N633-Ա հրամանով ձևավորված միջգերատեսչական մարմին է: Խորհուրդը ստեղծվել է 2015 թվականին ՀՀ

---

[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույց, ՀՀ ՄԻՊ, Երևան 2018, 178 էջ. 0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf (ombuds.am):

[5] Ռազմավարության ներդրման ընթացքում առաջնահերթ ուշադրություն կդարձվի շարունակական մոնիթորինգի և վերահսկողության անցկացմանը, որն ուղղված կլինի ռազմավարության ներդրման արդյունավետության գնահատմանը, ծագած խնդիրների հստակեցմանը և հնարավոր լուծումներին:

[6] Ըստ Ծրագրի՝ աստիճանական անցում է կատարվելու նշված գործողություններին: Աշխատանքը ներկայացնելու ժամանակահատվածի դրությամբ գնահատման աշխատանքները համակարգման փուլում են: Տե՛ս Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույց, ՀՀ ՄԻՊ, Երևան 2018, 178 էջ. 0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf (ombuds.am)

[7] Ըստ ՄԻՊ գնահատականի՝ Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեությունն արդյունավետ չէ. տե՛ս նույն տեղում. 0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf (ombuds.am):

[8] Հետազոտության շրջանակներում ներկայացված հարցաշարին ի պատասխան տրված տեղեկության համաձայն:

արդարադատության նախարարության և Հայաստանում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի իրականացրած «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» ծրագրի շրջանակում: Խորհրդի նպատակն է խթանել միջգերատեսչական համագործակցությունը, հարթակ ծառայել տարբեր կառույցների և կազմակերպությունների միջև ոլորտի վերաբերյալ խնդիրների քննարկման համար, մշակել համատեղ ռազմավարություններ և առաջարկություններ ներկայացնել օրենսդրական նախագծերի վերաբերյալ:

2017 թ. ՀՀ արդարադատության նախարարությունը գրավոր դիմել է այնպիսի միջազգային ցանցերին, ինչպիսիք են՝«Մենք պաշտպանում ենք համընդգրկուն դաշինքը»[9] և «Վերջ երեխաների նկատմամբ բռնությանը»[10] և Հայաստանը հաստատվել է որպես ուղենիշ երկիր (Pathfinding Country)[11]: Անդամակցության համար հարթակ է հանդիսացել ՀՀ արդարադատության նախարարության համակարգմամբ գործող Անչափահասների արդարադատության խորհուրդը:

2018 թ. հաստատվել է Անչափահասների արդարադատության խորհրդի գործունեությունը կանոնակարգող աշխատակարգը ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի մայիսի 11-ի N 188-Ա հրամանով:

Անչափահասների արդարադատության խորհուրդն իր աշխատանքները շարունակել է ՔՈՎԻԴ-19 համավարակի պայմաններում, մասնավորապես, երեխայի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրների լուծմանն ու իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներ են ծավալվել[12]:

3. Բյուջետային հատկացումների ավելացման և թափանցիկության ապահովման ուղղությամբ կատարված աշխատանքներ

*ա) կրթության ոլորտի բյուջետային հատկացումներ*

ՀՀ պետական բյուջեից վերջին տարիներին կրթությանը հատկացվող գումարներն են՝

| *Տարեթիվ* | *Գումար (հազ. դրամ)* |
|---|---|
| 2017 թ. | 127.594.171.4 |

[9] Տե՛ս «We Protect Global Alliance». https://www.weprotect.org/

[10] Տե՛ս EVAC (End Violence Against Children). https://www.end-violence.org/

[11] Համագործակցության շնորհիվ ՀՀ արդարադատության նախարարությունն ակտիվորեն ներգրավվել է կազմակերպվող համաժողովներին, վերապատրաստումներին, վեբինարներին, օգտվել է երեխայի իրավունքների պաշտպանության և բռնության կանխարգելման և արձագանքման վերաբերյալ տեղեկատվական ռեսուրսներից:

[12] Կազմակերպվել է Անչափահասների արդարադատության խորհրդի առցանց նիստ «ՔՈՎԻԴ-19 համավարակի համատեքստում երեխաների պաշտպանության առկա մարտահրավերները» թեմայով, որի ընթացքում քննարկվել են ՔՈՎԻԴ-19 համավարակի պայմաններում երեխաների պաշտպանության հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողությունները, որոնց հիման վրա մշակվել է «ԿՈՎԻԴ-19 համավարակի պայմաններում երեխաների պաշտպանության հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողությունների ծրագիր», որը շրջանառվել է Անչափահասների արդարադատության խորհրդի և շահագրգիռ կառույցների շրջանակում:

| | |
|---|---|
| 2018 թ. | 127.158.715.2 |
| 2019 թ. | 141.870.539.4 |
| 2020 թ. | 161,111,206.5 |
| 2021 թ. | 153.593.358.6 |
| 2022 թ. | 193.026.504 |

ՀՀ ԿԳՄՍ նախարարության համակարգման բյուջետային ծրագրերի և միջոցառումների ոչ ֆինանսական ցուցանիշներում հիմնականում ներառված են շահառուների սպասվող թիվը, մատուցվող ծառայությունների նկարագրությունը, ինչը հնարավորություն է տալիս առանձնացնել երեխաների իրավունքների իրացման ապահովմանն ուղղված միջոցառումները:

*բ) Սոցիալական ապահովության ոլորտի բյուջետային հատկացումներ*

2023-2025 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով (ՄԺԾԾ) նախատեսվել է երեխաների հիմնահարցերի ոլորտին վերաբերող մի շարք միջոցառումների ծախսերի ավելացում, որոնք ուղղված են երեխայի իրավունքների իրացման գործընթացները բարելավելուն: Այդպիսի միջոցառումների թվին են դասվում երեխաների խնամքի ցերեկային ծառայություններին, անկախ ապրելակերպ ուղեկցող ծառայությանը, խնամատարությանն առնչվող բյուջետային միջոցառումները:

Հարկ է նշել, որ Երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարության միջոցառումների ծրագիրը նախատեսում է երեխայի իրավունքների իրականացմանն ուղղված բյուջետավորման վերաբերյալ վերլուծություն, որի համար ՅՈՒՆԻՍԵՖ-ը մշակել է մեթոդաբանություն, որը վավերացրել են ոլորտային նախարարությունները և ֆինանսների նախարարությունը:

Երեխայակենտրոն բյուջետավորմանն է միտված երեխաներին ուղղված պետական ծախսերի գնահատման (CPEM) վերլուծությունը[13], որը երեխաների համար ուղղակի, անուղղակի և ընդլայնված ծախսերի համառոտ նկարագրությունն է և հնարավորություն է տալիս մեկնարկել երեխաներին նպատակաուղղված բյուջետավորման պլատֆորմ և ըստ տարիքի բյուջեների տարանջատման սատարում, մասնավորապես՝ գենդերային բյուջետավորման համատեքստում, որպեսզի վեր հանվեն երեխաներին վերաբերող հավասարության ու արդարության բացերը:

[13] Analysis on child-focused public expenditure measurement in Armenia, Final report, Yerevan 2018, UNICEF, 59 էջ, https://www.unicef.org/armenia/media/4116/file/Analysis%20on%20child-focused%20public%20expenditure%20measurement%20in%20Armenia.pdf

Պետական և տեղական բյուջեների միջոցով երեխաների և անչափահասների համար բյուջետավորումը ենթադրում է ոչ միայն մեթոդաբանական ուղեցույցների և գործնական խորհուրդների մշակում, այլև սոցիալական ոլորտի առանցքային նախարարությունների կարողությունների զարգացում, ֆինանսների նախարարության հետ ռազմավարական գործընկերության հաստատում և համագործակցության ընդլայնում միջազգային ֆինանսական հաստատությունների հետ, որոնք ակտիվ են պետական ֆինանսավորման ոլորտում[14]:

4. Մշտադիտարկող մարմնի դերի բարձրացման ուղղությամբ կատարված միջոցառումներից են.

- 2016 թվականի հունիսին Մարդու իրավունքների պաշտպանի հրամանով ստեղծվել է Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին, որն աշխատում է երեխաների հետ, կատարում է իրավական վերլուծություններ, իրականացնում է մշտադիտարկման այցեր, մասնակցում է միջազգային կազմակերպությունների աշխատանքներին.

- գործարկվել է Մարդու իրավունքների պաշտպանի՝ երեխաների համար մատչելի ինտերնետային կայքը (www.children.ombuds.am), որը պարունակում է տեղեկություն երեխայի իրավունքների մասին, իրավիճակային վերլուծություններ, իրավական վերլուծություններ, օրենսդրություն և այլն: Կայքը հնարավորություն է ընձեռում դիմել մարդու իրավունքների պաշտպանին և ստանալ առցանց խորհրդատվություն.

- Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքի համաձայն՝ Պաշտպանը ստանձնել է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ԵԻԿ) մշտադիտարկման գործառույթ[15]:

Կոմիտեի առաջարկությունները կատարվել են մասնակի:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ**. Կոմիտեի վերոհիշյալ առաջարկության կատարման ուղղությամբ անհրաժեշտ է.

- նախատեսել երեխայի իրավունքների վերաբերյալ ընդունվելիք ռազմավարական ծրագրերի հստակ *բյուջետային գնահատում*.
- ապահովել բյուջետային հատկացումների *թափանցիկությունը* կոնկրետ երեխաների իրավունքների սոցիալական և կրթական ոլորտներում.

---

[14] Նախատեսված է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով, 2017-2022 թվականներ:

[15] Այս գործառույթի իրականացման շրջանակներում ՄԻՊ հրապարակած զեկույցներից են՝ Երեխաների և անգործունակ չափահասների՝ որպես պացիենտների ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, անձնական ազատության և այլ իրավունքների վերաբերյալ, Երևան, 2019 f5dcd3eb211993d573b3aab9bc85ffd9.pdf (ombuds.am), ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ ՄԻՊ արտահերթ հրապարակային զեկույց, Երևան, 2018. 0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf (ombuds.am) և այլն:

- ձևավորել կառուցակարգեր Կոնվենցիայի կատարման համար տրամադրվող ռեսուրսների համարժեքությունը և դրանց բաշխման արդյունավետությունը և արդարացիությունը *մշտադիտարկելու և գնահատելու* համար:

## ՄԱՍ 2. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՄԿՋԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Կոմիտեն խտրականության արգելքի համատեքստում մտահոգություն է հայտնել.

- պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման,

- խոցելի և առավել անբարենպաստ իրավիճակներում հայտնված երեխաների տարբեր խմբերի, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, ՄԻԱՎ-ով ապրող երեխաների, կարիքավոր ընտանիքների երեխաների, գյուղական բնակավայրերում ապրող երեխաների, փողոցային իրավիճակներում հայտնված և հաստատություններում ապրող երեխաների վերաբերյալ:

*<u>Ա. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումն ու նորածինների սեռերի հարաբերակցության խախտված վիճակը վերականգնելու ուղղությամբ կատարվել են օրենսդրական փոփոխություններ ու միջոցառումներ:</u>*

*<u>Օրենսդրական ակտերի փոփոխություններ</u>*

Սելեկտիվ աբորտների վերաբերյալ արգելք է սահմանվել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում[16], մասնավորապես, չի թույլատրվում ապագա երեխայի սեռի պլանավորում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականություն: Վերը հիշատակված արգելքը կիրառելի է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքերում:

Սելեկտիվ աբորտի վերաբերյալ ընդունված ենթաօրենսդրական ակտերից են «Պտղի սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման համալիր միջոցառումների իրականացման մասին» ՀՀ վարչապետի հանձնարարականը (թիվ 02/14.7/5916-15, 10.04.2015 թ.) և «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման 2015թ. ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումները հաստատելու և դրանց իրականացման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 08.05.2015 թ. թիվ N 1129–Ա և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.05.2015 թ. թիվ N 75–Ա/1 համատեղ հրամանը[17],

[16] Տե՛ս «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենք: Նշված օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է հղիության արհեստական ընդհատման հիմքերը, երբ բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների՝ օրենքով նախատեսված կարգով ընդունված ցանկում չնախատեսված որևէ այլ դեպքում, ներառյալ՝ սեռով պայմանավորված՝ 12-ից մինչև 22 շաբաթական ընդհատումն արգելվում է (10-րդ հոդվածը փոփ. 30.04.15, ՀՕ-24-Ն, խմբ. 29.06.16, ՀՕ-134-Ն):

[17] Տե՛ս https://mlsa.am/wp-content/uploads/2017/05/Ardzanagrutyun-N11-15.10.2015.pdf

Հղիության արհեստական ընդհատումների կազմակերպման ընթացակարգը սահմանելու մասին ՀՀ առողջապահության նախարարի N3403-Ա հրամանը[18], ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի՝ հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները հաստատելու թիվ 180-Ն որոշումը[19], ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի 962–Ա և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թվականի 2020 թվականի 42–Ա համատեղ հրամանը:

Օրենքով սելեկտիվ աբորտի արգելքի ամրագումը ենթադրում է, որ պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատման փաստը դիտարկվում է որպես ապօրինի աբորտ, որի համար Քրեական օրենսգրքի 174-րդ հոդվածով նախատեսվում է պատիժ՝ տուգանք կամ կալանք[20]:

Վարչական պատասխանատվություն է նախատեսված նաև բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատում (աբորտ) կատարելուց առաջ և հետո օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցառումներ չիրականացնելու համար[21]:

ՀՀ առողջապահության նախարարության սույն հետազոտության շրջանակներում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի հոդված 19.1-ի՝ հղիության արհեստական ընդհատման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է ՀՀ կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը: Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի կայքում ներկայացված են ընդհանրական ստուգումների արդյունքները: Այստեղ թեև առկա է «թեմատիկ ստուգում» նշումը, սակայն նշված չէ, թե ինչ հարցի վերաբերյալ է թեմատիկ ստուգումն իրականացվել, և ինչ խախտումներ են հայտնաբերվել: Կարծում ենք՝ նշված տեսչական մարմնի կայքում պետք է հասանելի լինի վերահսկողության արդյունքների ոչ միայն «թեմատիկ ստուգում» նշումը, այլև պետք է ներառվեն թեմատիկ ստուգումների ընդգրկվածության աստիճանը, թեմատիկ կոնկրետացումը, խախտումները, խախտումների բնույթը և այլն:

*Սոցիալական միջոցներ*

Սելեկտիվ աբորտների դեմ պայքարը ոչ միայն իրավական, այլ նաև սոցիալական բնույթ է ունեցել, սոցիալական բազմաթիվ ակցիաներ են անցկացվել[22]:

---

[18] Տե՛ս ՀՀ առողջապահության նախարարի թիվ 3403-Ա հրաման: Հղիության արհեստական ընդհատման պատճառը և ախտորոշումը նշվում է Հղիության արհեստական ընդհատումների կազմակերպման ընթացակարգը սահմանելու մասին ՀՀ առողջապահության նախարարի թիվ 3403-Ա հրամանով հաստատված հղիության ընդհատման բժշկական քարտում:

[19] Տե՛ս ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները հաստատելու թիվ 180-Ն որոշումը. https://www.arlis.am/documentview.aspx?docID=111980&fbclid=IwAR1TJKWkqeZWt2eL2AZ2eEhRODANjNaX3yWAyyt4vEIiXWC5uJnw_KlXMoY

[20] ՀՀ քրեական օրենսգիրք: Հոդված 174. Հղիության ապօրինի արհեստական ընդհատում (աբորտ) կատարելը: 2021 թ. մայիսի 27: ՀՕ-199-Ն:

[21] Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, Հոդված 47.12, Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատում (աբորտ) կատարելուց առաջ և հետո օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցառումներ չիրականացնելը. https://www.arlis.am/documentview.aspx?docid=73129

Իրականացվել են նաև հանրային իրազեկման աշխատանքներ, մասնավորապես, ՀՀ առողջապահության նախարարությունը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի համագործակցությամբ, ծննդօգնության հիվանդանոցային ծառայություններ մատուցող հաստատությունների աշխատակիցների, այդ թվում՝ նշված ոլորտի ղեկավարության, երեխայի սեռը որոշելու նպատակով ուլտրաձայնային հետազոտություն կատարող անձնակազմի և գինեկոլոգների համար նախապատրաստել է հատուկ մեթոդաբանություն և հրապարակել «Հղիության սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելում» ձեռնարկը: Նշված ձեռնարկի հիման վրա մշակվել է տեղեկատվական թերթիկ բուժանձնակազմի, մասնավորապես՝ մանկաբարձ-գինեկոլոգների և ուլտրաձայնային հետազոտություն իրականացնողների համար: Թերթիկում զետեղված է տեղեկատվություն՝ սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված արդյունավետ խորհրդատվության տրամադրման վեց քայլի վերաբերյալ:

2021 թվականին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից կատարվել է Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում անպտղության տարածվածության վերաբերյալ հետազոտություն, որի հարցաշարում ընդգրկված են եղել նաև սելեկտիվ աբորտների մասին հարցեր:

Խնդրի իրավական կարգավորումը, սոցիալականացումը և հանրային իրազեկումն էականորեն փոխել են սելեկտիվ աբորտի պատկերը թե՛ Երևանում, թե՛ գյուղական վայրերում[23]: Փոխվել է նաև վիճակագրական պատկերը: Մասնավորապես, ըստ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկության, իրականացված համալիր միջոցառումների արդյունքում որոշակի դրական միտումներ են արձանագրվել սելեկտիվ աբորտների հիմնախնդրի հաղթահարման գործընթացում: Այսպես՝ եթե սելեկտիվ աբորտների դեմ պայքարին ուղղված միջոցառումներին նախորդող՝ 2008-2012 թթ. ժամանակահատվածում ծնվածների մեջ աղջիկ-տղա հարաբերակցության միջին ցուցանիշը եղել է 100:115, ապա հետագա տարիներին պատկերը փոխվել է: Մասնավորապես, 2014 թ. այդ ցուցանիշը կազմել է 100:113,4, 2015 թ.՝ 100:112,7, 2016 թ.՝ 100:111,9, 2017 թ.՝ 100:109,8, 2018 թ.՝ 100:111, 2019 թ.՝ 100:110, 2020 թ.՝ 100-112, 2021 թ.՝ 100:108.8:

Չնայած Կոմիտեն սելեկտիվ աբորտների հիմնախնդրի հաղթահարման ուղղությամբ բազմաթիվ միջոցառումներ է իրականացրել, այնուամենայնիվ, տարբեր

---

[22] «Հայաստանի չծնված աղջիկները», «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության և «ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ»-ի աջակցությամբ անցկացրել է ակցիաներ ընդդեմ սելեկտիվ աբորտների, նկարահանվել են սոցիալական հոլովակներ սելեկտիվ աբորտների վերաբերյալ՝
https://www.youtube.com/watch?v=8eJfw-LMbr0&feature=youtu.be&fbclid=IwAR1qTpT6znLkU47lW2c7ighonvrYsIl7G5BtIHPTwy98VC0RMkDde8GDcwk
https://www.youtube.com/watch?v=u-AO_90niKA&feature=youtu.be&fbclid=IwAR2Bt2W1ZH9zab7RSBHzXDx2U0IyHsffCKo3Ef1HtAkCDzWjSe29SwExzp0
https://www.youtube.com/watch?v=ZmyjHsltmn0&feature=youtu.be&fbclid=IwAR1qTpT6znLkU47lW2c7ighonvrYsIl7G5BtIHPTwy98VC0RMkDde8GDcwk
https://www.youtube.com/watch?v=Cr0I-0pNau0&feature=youtu.be&fbclid=IwAR1yaf9inChgpYFFUYv325n1_vucjKkeS0uh_8Sk6YG4SRf--hExwYZaUIA

[23] Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման գործիքները առողջապահական համակարգում. փաստերի վրա հիմնված իրազեկում և խորհրդատվություն: Մարդկային զարգացման միջազգային կենտրոն: Երևան, 2016. https://ichd.org/?laid=2&com=module&module=static&id=1107

հետազոտությունների և զեկույցների ուսումնասիրության արդյունքում, հետազոտության շրջանակներում, վեր են հանվել հետևյալ հիմնախնդիրները.

ա) սելեկտիվ աբորտների վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն չի վարվում[24], թեև Ազգային վիճակագրական կոմիտեն վարում է *նորածինների սեռերի* համամասնության վիճակագրություն, ինչը անուղղակիորեն արտացոլում է պտղի սեռով պայմանավորված սելեկցիան.

բ) կա արժեհամակարգային խնդիր. ավանդական արժեհամակարգից բխող՝ տղա երեխայի նախապատվության անփոփոխ մոտեցումների առկայություն[25].

գ) կա հետօրենսդրական բարելավված վիճակի պահպանման անհրաժեշտություն. թեև օրենքի ընդունումից հետո վիճակագրական պատկերը փոխվել է[26], սակայն անհրաժեշտ է միջոցառումների շարունակականություն.

դ) կա բուժաշխատողների հետ աշխատանքի անհրաժեշտություն. բժշկի կողմից աբորտից առաջ տրամադրվող խորհրդատվության ծավալը և բովանդակությունը մեծ մասամբ կախված են նրա շարժառիթներից, արժեքներից և մոտեցումներից, ինչը ռիսկեր է պարունակում[27].

ե) թեև խնդրո առարկա հարցը ներառված է գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարության մեջ[28], սակայն այդ հարցի ընդգրկումը գենդերային քաղաքականության մեջ պետք է լինի շարունակական՝ հօգուտ աղջիկ երեխաների լույս աշխարհ գալուն աջակցության.

զ) կա պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատման դեպքերի լատենտայնության հավանականություն. հատկապես մարզերում սելեկտիվ աբորտների լատենտայնությունը բացահայտելու ուղղությամբ անհրաժեշտ է հետազոտություններ իրականացնել:

*<u>Սեռի հիմքով խտրականության դեմ պայքար</u>*

*Օրենսդրական ակտեր*

---

[24] Ըստ Առողջապահության ազգային ինստիտուտի՝ պաշտոնական տվյալների բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հղիության այդ ընդհատումները օրենսդրորեն չեն կարող ձևակերպվել, քանի որ դրանք հիմնականում կատարվում են 14-15 շաբաթականում (երբ առավել հավաստի է պտղի սեռը որոշելը), հետևաբար այն ձևակերպվում է որպես աբորտ «բժշկական ցուցումներով», կամ որպես մինչև 12 շաբաթական հղիություն, որի դեպքում աբորտը կնոջ կամքով է, և պատճառը կարող է չնշվել. տե՛ս https://nih.am/assets/pdf/atvk/db7aad88a52714a90f6b69ecca6df204.pdf

[25] Տե՛ս նույն տեղում https://nih.am/assets/pdf/atvk/db7aad88a52714a90f6b69ecca6df204.pdf

[26] Տե՛ս Հավելված 1:

[27] Հայաստանի Հանրապետությունում պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի Մշտադիտարկման զեկույց. file:///C:/Users/user/Downloads/333.pdf

[28] Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման հարցը ներառված է ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեբերի 19–ի Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին N 1334-Լ որոշման Հավելված 2-ով հաստատված ծրագրում:

Սեռի հիմքով խտրականության արգելքը սահմանադրաիրավական ամրագրում է ստացել[29]: Սեռի հիմքով խտրականության դեմ պայքարի մասին ՀՀ օրենսդրության զարգացման նպատակով ընդունվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների մասին» ՀՀ օրենքը[30]:

2019 թվականին մշակվել են «Ազգային փոքրամասնությունների մասին», «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքների և հարակից օրենքների նախագծերը[31], որոնք տեղադրված են https://www.e-draft.am/ կայքում[32]:

2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող՝ 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին կառավարության որոշմամբ[33] նախատեսված են իրավահավասարությանը՝ խտրականության արգելքին ուղղված գործողություններ, որոնք ներառում են «խտրականություն» հասկացության օրենսդրական սահմանումը, իրավահավասարության հարցերով զբաղվող մարմնի կազմավորումը, գործունեության երաշխիքների ապահովումը, իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով վերապատրաստումների իրականացումը, իրավահավասարության, խտրականության բոլոր ձևերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը և այլն: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության կատարման ժամկետի ավարտին ակնկալվում է «Իրավահավասարության մասին» ՀՀ օրենքի ընդունում:

Կոմիտեի՝ պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատման վերաբերյալ օրենսդրական, վարչական և պրակտիկ բնույթի առաջարկությունները մեծ մասամբ կատարված են:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ**. Մեկնարկած աշխատանքների իրականացման շարունակականության ապահովում, ինչպես նաև «Իրավահավասարության մասին» ՀՀ օրենքի ընդունում:

---

[29] ՀՀ Սահմանադրություն, 2015 թ.: ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով ամրագրված է խտրականության արգելքը, այդ թվում՝ սեռի հիման վրա:

[30] Տե՛ս «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841: Օրենքով սահմանվում են գենդերային խտրականության բացառումը, գենդերային խտրականության ուղղակի (հղիության հիմքով խտրականությունը) և անուղղակի ձևերը, գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությունը, գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման մշտադիտարկումը և այլն:

[31] Տե՛ս «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը: «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանվում են «խտրականություն» հասկացությունը և տեսակները, կանոնակարգվում են խտրականության վերացմանն ուղղված և խտրականությունից պաշտպանվելու իրավական մեխանիզմները, ինչպես նաև Իրավահավասարության խորհրդի կարգավիճակը, խնդիրները և գործունեությունը: Տե՛ս նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841

[32] «Ազգային փոքրամասնությունների մասին», «Իրավահավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և հարակից օրենքների նախագծեր - e-draft.am

[33] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագիր: Հավելված 2, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման: Lokal_2020-1978hav2.docx (live.com)

Բ. Խոցելի և առավել անբարենպաստ իրավիճակներում հայտնված երեխաների որոշակի խմբերի նկատմամբ խտրականությունը և դա հաղթահարելու ուղղությամբ միջոցառումները

*Օրենսդրական ակտեր*

Այս ոլորտում դրական տեղաշարժը վերաբերում է երեխաների խնամքի և պաշտպանության համակարգում խտրականության դեպքերի նվազեցմանն ու կարգավորմանը: Քննարկվող հարցին վերաբերելի են՝

- «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որոնք գտնվում են լրամշակման փուլում: Միջոցառումն ամրագրված է նաև ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ.
- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը.
- «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման վերաբերյալ հայտնի է, որ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման N1 հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսվում է մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը: Նախագծերով ձևավորվելու է սոցիալական պաշտպանության բնագավառի սոցիալական աջակցության ոլորտին վերաբերող հատվածի իրավական հենքը (վերջնաժամկետը՝ 2022 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ), որը հնարավորություն կտա սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություն տրամադրելու սկզբունքի հիման վրա նպաստել անձի ինքնորոշման, ինքնօգնության սոցիալական հմտությունների զարգացմանը՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Միաժամանակ, օրենսդրական փաթեթի ընդունմամբ սոցիալական աշխատանքի ինստիտուտի զարգացման, սոցիալական աշխատանքի որակի վերահսկման մեխանիզմների, շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդրմամբ հնարավոր կլինի ընդլայնել բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների դաշտը, տեսականին և որակը.
- «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակված տարբերակը նախատեսվում է շրջանառել «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման նոր ռազմավարության և 2021-2026 թթ. գործողությունների ծրագրի» նախագծի ընդունումից հետո: Ենթաօրենսդրական մակարդակով ընդունված ակտերն են՝

- ՀՀ կառավարության թիվ 551-Ն որոշումը (2016 թվականի մայիսի 26)[34].

- «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգը»[35], ինչպես նաև «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» 2020 թվականի ապրիլի 2-ին ընդունված ՀՀ կառավարության N 432-Լ որոշումը.

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը[36].

-_ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշումը[37].

- Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիրը:

*Այլ միջոցառումներ*

Միաժամանակ իրականացվել են նաև հետևյալ միջոցառումները.

- ընտանիքների երեխաների, գյուղական բնակավայրերի երեխաների, փողոցում հայտնված և հաստատություններում գտնվող երեխաների նկատմամբ խտրականության իրավիճակը հաղթահարելու նպատակով ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը իրականացրել է վերապատրաստումներ «Հաշմանդամ երեխաների

---

[34] Տե՛ս 2016 թվականի մայիսի 26-ի ՀՀ կառավարության թիվ 551-Ն որոշումը: Կառավարության այս որոշմամբ սահմանվել են երեխաների այլընտրանքային խնամքի տրամադրման սկզբունքները և չափորոշիչները, ինչպես նաև կարգավորվել են այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման հետ կապված հարաբերությունները. https://www.arlis.am/documentview.aspx?docid=106094

[35] ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի նիստի N 18 արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգը, որն ուղղված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով, վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայով և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային այլ փաստաթղթերով ամրագրված պարտավորությունների կատարմանը:

[36] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը: Միջոցառումների այս ծրագրով կարևորվում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու այլընտրանքային, համայնքահեն ծառայությունների ցանցի ընդլայնմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Այն նախանշում է բարեփոխումների նոր փուլ, որի նպատակն է ապահովել երեխաների պաշտպանության համակարգի և երեխաների իրավունքների իրացմանն ուղղված անհրաժեշտ միջավայրի ստեղծման համար համալիր միջոցառումներ՝ ելնելով ներկա իրավիճակից և նախորդ փուլերի ընթացքում ձեռք բերված փորձառությունից և քաղած դասերից:

[37] Նշված որոշման համաձայն՝ աշխատանքներ են տարվելու՝ բացառելու հաշմանդամության հիմքով խտրականությունը կյանքի բոլոր ոլորտներում, ապահովվելու է հաշմանդամություն ունեցող անձանց՝ հատուկ հաստատություններից դուրս անկախ կյանքի և համայնքում ներառվելու իրավունքի իրացումը:

սոցիալական ներառումը», «Երեխաների նկատմամբ խտրականության կանխարգելումը», «Անչափահասների շրջանում մուրացկանության և թափառաշրջիկության հիմնախնդիրները» թեմաներով.

- առողջապահության ոլորտում խթանվում է համայնքային վերականգնողական կենտրոնների ստեղծումը, ստեղծվում են հաշմանդամություն ունեցող երեխաների վաղ հայտնաբերման համակարգեր.

- ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ վերապատրաստում է իրականացվել «Տնային այցերի ժամանակ վաղ տարիքի երեխաների խնամքի և զարգացման վերաբերյալ տրամադրվող խորհրդատվության հիմունքներ» թեմայով, որի բաժիններից մեկը նվիրված է եղել հաշմանդամություն կամ զարգացման խնդիրներ ունեցող երեխաների և նրանց ընտանիքների հետ տարվող աշխատանքին.

- հաշվի առնելով, որ կրթության ոլորտում ընթացքի մեջ է ներառական կրթության մշակույթի և պրակտիկայի ներդրման գործընթացը բոլոր հանրակրթական դպրոցներում, հատուկ դպրոցներն աստիճանաբար վերակազմավորվում են աջակցության կենտրոնների, որոնց աշխատողները վերապատրաստվում են աջակցման ծառայություններ տրամադրելու համար։

<u>ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող երեխաները</u>

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից Հայաստանը ստացել է հավաստագիր և մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցումը վերացրած երկրի կարգավիճակ:

ՀՀ կառավարությունը 2017 թ. հաստատել է «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հերթական նպատակային ծրագիրը, որի հիմնական նպատակը 2017-2021 թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին արդյունավետ հակազդման ապահովումն ու մինչև 2030 թ. ՁԻԱՀ-ի համաճարակի վերացմանը հասնելու համար նախադրյալների ստեղծումն է:

ՀՀ կառավարության 2017 թ. հունիսի 15-ին թիվ 25 արձանագրությամբ հավանության է արժանացել ՀՀ-ում 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ կանխարգելման պետական նպատակային ծրագիրը և ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկը[38]:

Սկսած 2017-ից երկրում ներդրվել է ԱՀԿ-ի «բուժել բոլորին» ռազմավարությունը, համաձայն որի՝ ՄԻԱՎ վարակով բոլոր պացիենտներին, ներառյալ երեխաները, առաջարկվում է հակառետրովիրուսային բուժում՝ անկախ CD4+ լիմֆոցիտների քանակից և հիվանդության կլինիկական փուլից»:

30.09.2021 թ. N 1596-Լ 2022 թվականի առողջապահական նպատակային ծրագրերը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսվում է իրականացնել «Մորից

[38] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունում 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրին, ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք/15 հունիսի 2017 թվականի թիվ 25. http://www.irtek.am/views/act.aspx?aid=90527

երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում» ծրագիրը՝ ապահովելով բոլոր հղիների խորհրդատվությունը և հետազոտումը, բուժաշխատողների ուսուցումը, բնակչության իրազեկումը[39], ինչպես նաև շարունակել Գլոբալ հիմնադրամի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2022 թվականին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման ծրագրերի իրականացումը: Բժշկական կազմակերպություններին և քրեակատարողական համակարգի համապատասխան ծառայություններին կանոնավոր կմատակարարվեն հակառետրովիրուսային, հակատուբերկուլոզային դեղեր, ՄԻԱՎ-ի ախտորոշման թեստ-հավաքածուներ, լաբորատոր ծախսանյութեր, վարակի վերահսկման պարագաներ և սարքավորումներ: Կիրականացվեն բուժանձնակազմերի շարունակական վերապատրաստման, հիվանդների սոցիալական աջակցության և տնային խնամքի, էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի ներդրման և կատարելագործման, ինչպես նաև հանրության իրազեկման միջոցառումներ և հետազոտական ծրագրեր:

Բնակչության խոցելի խմբերի, այդ թվում՝ աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների շրջանում կիրականացվեն ՄԻԱՎ վարակի կանխարգելմանն ու հետազոտման հասանելիությանն ուղղված ծրագրեր: ՄԻԱՎ և այլ արյունային վարակների կանխարգելման նպատակով կշարունակվի ներերակային թմրամիջոցներ օգտագործող անձանց մեթադոնային փոխարինող բուժման ծրագիրը:

Շարունակական միջոցառումներից են ՄԻԱՎ վարակի հետազոտման ուղեցույցի հրապարակումը, որը ՄԻԱՎ վարակի խորհրդատվության վերաբերյալ արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված հետազոտման և խորհրդատվության գործառույթների համալիր է և նախատեսված է մաշկաբան-սեռավարակաբանների գործնական աշխատանքի ընթացքում ՄԻԱՎ վարակով պացիենտների խորհրդատվության արդյունավետության բարձրացման և հայտնաբերման ցուցանիշների բարձրացման համար: Ուղեցույցը նախատեսում է երեխայի հետ կապված որոշակի կարգավորումներ՝ ապագա հնարավոր հղիության և երեխային սպառնացող վտանգի վերաբերյալ՝ հղիության ընթացքում հակառետրովիրուսային թերապիայի անհրաժեշտության մասին: Քանի որ բուժում չստացող՝ ՄԻԱՎ-ով վարակված կանանցից ծնված երեխաների 15-25 %-ը վարակվում է, ապա հակառետրովիրուսային բուժումը կարող է կրճատել այս ցուցանիշը մինչև 8%[40]:

Հղիության առաջին և երրորդ եռամսյակում կանայք հետազոտում են անցնում նաև ՄԻԱՎ-ի նկատմամբ: Հետազոտությունը պարտադիր չէ, սակայն հղիին վերաբերող ցուցումներում առկա է, և հղի կանանց գերակշիռ մեծամասնությունն անցնում է այդ հետազոտությունը:

2018 թ. ընդունվել է նաև ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության ուղեցույց, որում առկա են կարգավորումներ, որոնք առնչվում են երեխաների ՄԻԱՎ վարակի դասակարգման, երեխաների ՄԻԱՎ վարակի ախտորոշման համար ՄԻԱՎ վերաբերյալ հետազոտությունների ռազմավարության, մինչև 18 ամսական երեխաների

[39] 2022 թվականի առողջապահական նպատակային ծրագրերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 30 սեպտեմբերի 2021 թվականի թիվ 1596-Լ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=156457

[40] Տե՛ս ՄԻԱՎ վարակի հետազոտման ուղեցույց. MIAV.pdf (moh.am)

ՄԻԱՎ վարակի ախտորոշման համար ՊՇՌ մեթոդով կատարվող ՄԻԱՎ-ի ԴՆԹ-ի հայտնաբերմանն ուղղված հետազոտության վերաբերյալ հարցերին[41]:

*Կարիքավոր ընտանիքների երեխաների, գյուղական բնակավայրերում ապրող երեխաների և փողոցային իրավիճակներում հայտնված և հաստատություններում ապրող երեխաների նկատմամբ խտրականություն*

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների, գյուղական բնակավայրերի երեխաների, փողոցում հայտնված և հաստատություններում գտնվող երեխաների նկատմամբ խտրականության իրավիճակը հաղթահարելու նպատակով ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը իրականացրել է վերապատրաստումներ «Հաշմանդամ երեխաների սոցիալական ներառումը», «Երեխաների նկատմամբ խտրականության կանխարգելումը», «Անչափահասների շրջանում մուրացկանության և թափառաշրջիկության հիմնախնդիրները» թեմաներով:

2021 թ. ընդունվել է «Եկեք սովորենք երեխայի իրավունքները» վերտառությամբ ուղեցույցը ուսուցիչների համար, որում մանրամասն բացատրվում են խտրականությունը, դրա ձևերը, ինչպես նաև՝ ինչպիսի վարքագծից պետք է ուսուցիչները զերծ մնան տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների երեխաների հանդեպ[42]:

Կոմիտեի վերոհիշյալ առաջարկությունը կատարվել է մասամբ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.** Միջոցներ ձեռնարկել «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, «Բազմազավակ ընտանիքների մասին» օրենքների ընդունման ուղղությամբ:

## ՄԱՍ 3. ԵՐԵԽԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

*Օրենսդրություն*

Ընտանեկան օրենսգրքում[43] ամրագրվել է երեխայի «լավագույն շահ» հասկացությունը՝ կիրառելով թիվ 14 Ընդհանուր մեկնաբանությամբ նշված մոտեցումը[44]: «Երեխայի

[41] Տե՛ս ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության ուղեցույց, 2018. https://ngngo.net/wp-content/uploads/2020/03/1.pdf

[42] Տե՛ս «Եկեք սովորենք երեխայի իրավունքները»: Ուղեցույց ուսուցիչների համար. https://www.unicef.org/armenia/media/11921/file/%D4%B5%D5%AF%D5%A5%D6%84%20%D5%BD%D5%B8%D5%BE%D5%B8%D6%80%D5%A5%D5%B6%D6%84%20%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B5%D5%AB%20%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8.pdf

[43] Տե՛ս ՀՀ ընտանեկան օրենսգիրք: ՀՀ ընտանեկան օրենսգրքում կատարվել է փոփոխություն *(1-ին հոդվածը խմբ., լրաց. 21.12.17 ՀՕ-10-Ն),* և «երեխայի օրինական շահ» հասկացությունը փոխարինվել է «երեխայի լավագույն շահ» հասկացությամբ (1-ին հոդված, 130-րդ հոդված, 137-րդ հոդված, 138-րդ հոդված, 139-րդ հոդված), և այն ներառում

իրավունքների մասին» ՀՀ օրենքը և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում են «երեխայի օրինական շահ» սկզբունքը: Թվացյալ նույնաբովանդակությամբ հանդերձ՝ նյութաիրավական էությամբ «երեխայի օրինական շահ» հասկացությունը համարժեք չէ «երեխայի լավագույն շահ» հասկացությանը, քանի որ առաջինը երեխայի շահերը կոնկրետ իրավիճակում սահմանափակում է տվյալ իրավահարաբերությունը կարգավորող օրենքի շրջանակներով:

Կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտ է երեխայի իրավունքներին առնչվող բոլոր օրենքներում ամրագրել «երեխայի լավագույն շահ» հասկացությունը:

Երեխայի «լավագույն շահ» հասկացությունն արտացոլվել է նաև ենթաօրենսդրական ակտերի և ուղեցույցների մակարդակով.

- «Դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 10.03.2016 թվականի որոշում.
- «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N-1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016 թ. մայիսի 26-ի N 551-Ն որոշում.
- Երեխայի իրավունքների զարգացման ազգային ռազմավարական ծրագիր[45]. 13.07.2017 թ. թիվ 30 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին».
- «Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման» ռազմավարությունը (06. 08.2015 թ.).
- «Երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին ուղեցույց (2017թ.)[46].
- ՀՀ ԱՆ կողմից մշակվել է «Զգու՛յշ, երեխաներ են» ուղեցույց՝ երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ երեխաների և բոլորի համար: Ուղեցույցը կազմվել է 2018 թվականին ՅՈՒՆԻՍԵՖ-ի (ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ) աջակցությամբ իրականացվող «Բազմաոլորտային

---

է ոչ միայն իրավաբանական սահմանումը, այլ նաև երեխայի շահերին ծառայող տարրերը/գործոնները (օրինակ՝ երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, ծնողի և ընտանիքի անդամների հետ շփվելու կարևորությունը, մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը և այլն):

[44] ՀՀ ընտանեկան օրենսգիրք: Երեխայի լավագույն շահը սահմանված է նաև կոնկրետ իրավահարաբերություններում, օրինակ՝ որդեգրման ժամանակ (հոդված 112), խնամատար ընտանիքի ընտրությունը կատարելիս (հոդված 137), առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը և դաստիարակությունը կազմակերպելիս (հոդված 111) և այլն:

[45] Նախորդ երեք ծրագրերում այս իրավունքը չի սահմանվել:

[46] Տե՛ս Երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին ուղեցույց, ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, Երևան, 2017.
http://justice.am/storage/uploads/001.Ughecuyc-erexaneri_andznakan_tvyalner.pdf

ազգային հարթակի ուժեղացում՝ ուղղված երեխաների հանդեպ բռնությանը վերջ դնելու գործողությունների պլանավորմանը, իրագործմանը և գնահատմանը» ծրագրի շրջանակում.

- ՀՀ փաստաբանների պալատը հրատարակել է «Երեխայի լավագույն շահ» ուղեցույց-ձեռնարկը (2022 թ.)[47]:

Վերոհիշյալ բոլոր ակտերում «երեխայի լավագույն շահը» սահմանվել է որպես սկզբունք:

Կոմիտեի մյուս մտահոգությունը ևս լուծում է ստացել. վարչարար մարմինները ևս հաշվի են առնում երեխայի լավագույն շահը, մասնավորապես, խնամատար ընտանիքի ընտրությունը Երևան քաղաքում իրականացնում է Երևանի քաղաքապետարանը՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը, որդեգրման գործընթացների ժամանակ ևս հաշվի է առնվում երեխայի լավագույն շահը:

«Երեխայի լավագույն շահ» սկզբունքը՝ որպես իրավական կատեգորիա, աստիճանաբար տարածվում է դատական պրակտիկայում, սակայն դեռ վաղ է պնդել, թե դա լայն կիրառություն ունի՝ բացառությամբ առանձին ոլորտների[48], մասնավորապես.

- ընտանեկան իրավահարաբերություններ. ընտանեկան գործերով ձևավորվել է դատական պրակտիկա «երեխայի լավագույն շահ» հասկացության կիրառության ուղղությամբ: Թե՛ Վճռաբեկ դատարանը, թե՛ ստորադաս ատյանները զարգացրել են որոշակի դատական պրակտիկա, օրինակ՝ ամուսնալուծության հարցերով, ալիմենտի բռնագանձման ու վճարման չափը, երեխայի բնակության վայրը և տեսակցության կարգը որոշելու գործերով «երեխայի լավագույն շահ» սկզբունքի կիրառության պրակտիկա: Սակայն չկա միասնական դատական պրակտիկա, թե ինչպես պետք է որոշել երեխայի լավագույն շահը տվյալ հանգամանքների ներքո[49].
- վարչական արդարադատություն. այս ոլորտում քննարկվող սկզբունքն առնչվել է առավելապես որդեգրման, տեսակցության, ալիմենտի չափի, երեխայի խնամքի ու անվտանգության վերաբերյալ վարչական մարմինների ակտերի կամ դատական ակտերի կատարման հետ: Ինչպես ՄԻՊ-ը իր 2018 թ. արտահերթ զեկույցում է նշել՝ վարչական արդարադատության շրջանակում առավել զսպված է կիրառվել «երեխայի լավագույն շահ» սկզբունքը՝ պայմանավորված երեխայի իրավունքների

[47] Տե՛ս «Երեխայի լավագույն շահ» ուղեցույց-ձեռնարկ: Երևան, 2022: Ձեռնարկը նախատեսված է հատկապես ընտանեկան և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում մասնագիտացող փաստաբանների, ոլորտին առնչվող այլ մասնագետների համար և պարունակում է «երեխայի լավագույն շահ» հասկացության միջազգային և ներպետական չափանիշները, բացահայտում է իրավակիրառ, այդ թվում՝ դատական պրակտիկայում առկա իրավիճակը, խնդիրները և զարգացումները:

[48] Տե՛ս ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույց, Երևան, 2018. 0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf (ombuds.am)

[49] Նույն տեղում.
0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf (ombuds.am)

առնչությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերի թույլ զարգացած վարչարարությամբ[50].

- քրեական դատավարություն. քրեական դատավարությունում կիրառվող սկզբունքը լայն տարածում չի ստացել[51]: Քրեական դատավարության նոր օրենսգիրքը կարգավորումներ է պարունակում, որոնք առնչվում են երեխայի, անչափահասի լավագույն շահի սկզբունքի կիրառմանը[52]:

Կոմիտեի առաջարկությունը մեծ մասամբ կատարվել է:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.** Բոլոր օրենսդրական ակտերը համապատասխանեցնել Կոնվենցիայի պահանջներին՝ ամրագրելով «երեխայի լավագույն շահ» հասկացությունը, և շարունակել միասնականացնել «երեխայի լավագույն շահ» սկզբունքի կիրառման ուղղությամբ դատական պրակտիկան:

*ԵՐԵԽԱՅԻ ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ*

Կոմիտեի մտահոգությունը վերաբերում է երեխայի լսված լինելու իրավունքին՝ դպրոցում, ընտանիքում, խնամքի հաստատություններում, դատարաններում: Կոմիտեն նաև մտահոգություն է հայտնել երիտասարդական խորհրդարանների գործունեության և դրանցում երեխաների մասնակցության վերաբերյալ:

Կոմիտեի մտահոգության առարկայի շրջանակներում են նաև բժշկական միջամտությունների ժամանակ ոչ թե երեխայի ծնողի, օրինական ներկայացուցչի, այլ անձամբ երեխայի կարծիքը հաշվի առնելու, այսինքն՝ երեխայի արտահայտելու իրավունքի իրացման հնարավորությունը:

Օրենսդրություն

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվել է երեխայի ազատ արտահայտվելու իրավունքը[53]: Երեխայի լսված լինելու իրավունքին սահմանադրաիրավական կարգավիճակ տալը նպաստել է այս իրավունքի հորիզոնական և ուղղահայաց կիրառությանը օրենսդրության մեջ[54]:

---

[50] Տե՛ս ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ ՄԻՊ արտահերթ հրապարակային զեկույց, Երևան, 2018.
0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf (ombuds.am)

[51] Նույն տեղում. 0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf (ombuds.am)

[52] Քրեական դատավարության օրենսգիրք: Հոդված 212 և հոդված 267:

[53] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ, 2015.
https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

[54] Տե՛ս ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույց, Երևան, 2018.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածը, մի կողմից, սահմանում է երեխայի լսված լինելու իրավունքը առանց տարիքային սահմանափակման (1-ին մաս), իսկ մյուս կողմից՝ որոշակի հանգամանքներում սահմանում է տարիքային սահմանափակում՝ մինչև տասը տարին լրանալը (2-րդ մաս): Հարկ է նշել, որ ընտանեկան օրենսգրքի 57-րդ հոդվածում (Ծնողական իրավունքների պաշտպանություն) առաջին կետի երկրորդ պարբերությունը ենթարկվել է փոփոխության, համաձայն որի՝ հաշվի առնելով երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել ծնողների հայցի բավարարումը, եթե հանգի այն եզրակացության, որ ծնողներին վերադարձնելը չի բխում երեխայի շահերից: Այս պարբերության մեջ հանվել է տասը տարեկան լինելու պահանջը:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը չի սահմանում տարիքային սահմանափակում երեխայի լսված լինելու իրավունքի իրացման հարցում[55]:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում անչափահասները, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիները կարող են դատարանում ինքնուրույն ներկայացնել իրենց շահերը: Օրենքով նախատեսված դեպքերում գործի քննության ընթացքում նրանք ունեն իրենց շահերին առնչվող հարցերի վերաբերյալ լսվելու իրավունք[56]:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ եթե երեխայի կարծիքը, դատարանի գնահատմամբ, չի համընկնում երեխայի շահերին, ապա դատարանը պարտավոր է առաջնորդվել երեխայի շահերով, այն է՝ երեխայի կարծիքը գնահատել երեխայի շահին ծառայող այլ գործոնների լույսի ներքո[57]: Մեկ այլ որոշման[58] մեջ ՀՀ սահմանադրական դատարանը, mutatis mutandis սահմանել է, որ «իրավակիրառ պրակտիկայում չպետք է փորձել երեխայի լսվելու իրավունքը պայմանավորել տարիքային սահմանափակումով, որը չի բխում Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներից: Կոնկրետ քրեական դատավարության իմաստով՝ դատարանը սահմանել է, որ վարույթն իրականացնող մարմինն է պարտավոր ապահովել երեխայի լսվելու իրավունքի իրացումը՝ անկախ տարիքից, հաշվի առնել այն և առաջնահերթ կարգով երեխայի շահերից ելնելով որոշում կայացնել»:

Անհրաժեշտ է նշել, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ գործող օրենքում[59] օրենսդրական փոփոխություն դեռևս չի արվել՝ ի կատարումն Կոմիտեի առաջարկության:

---

https://ombuds.am/images/files/0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf

[55] Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 1996. https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115 : Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով:

[56] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդված:

[57] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը քաղաքացի Իգոր Հակոբջանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով,ՍԴՈ-919. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=61311

[58] Տե՛ս ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի և 77-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ ՍԴՈ-1333. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=110363

[59] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=104958

*Հանրային իրազեկման միջոցառումներ*

ՀՀ արդարադատության նախարարությունը, Հայաստանում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ, իրականացրել է միջոցառում «Երեխաների մասնակցությունը հանրային քաղաքականության մշակմանը և իրականացմանը» խորագրով: Միջոցառումը միտված էր երեխաների իրավունքների իրացմանը, լսելիությանը, ռազմավարությունների մշակման գործընթացում ներգրավվածության ապահովմանը:

Կոմիտեի այս առաջակությունը մեծ մասամբ կատարվել է:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.** Անհրաժեշտ է օրենսդրությունը համապատասխանեցնել Կոմիտեի եզրափակիչ դիտարկումներին՝ փոփոխություն կատարելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում:

## ՄԱՍ 4. ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Կոմիտեի մտահոգության շրջանակում են երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի և բռնության դրսևորումները ընտանիքում, հանրակրթական հաստատություններում և այլուր: Այս ուղղությամբ էական քայլ է արվել՝ ի դեմս 13.12.2017 թ. ընդունված՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի[60], «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի[61], «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի[62] ընդունման[63]:

---

[60]«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, 2017. https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672

[61] Տե՛ս «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենք: Օրենքում ամրագրված «մարդկանց թրաֆիքինգ» հասկացության մեջ ներառված է երեխան.https://www.arlis.am/documentview.aspx?docid=94984

[62] Տե՛ս «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, 2014: «Ընտանիքում բռնություն» եզրույթում երեխան ևս ներառված է. https://www.arlis.am/documentview.aspx?docid=94972

[63] Ընդունվել են նաև հետևյալ ենթաօրենսդրական ակտերը. ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 51 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգ»-ը և «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգից բխող միջոցառումների ցանկ»-ը, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի N 614-Ն և 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման մեջ լրացում ու փոփոխություն և 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1516-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1069-Ն որոշումը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ 2015 թվականի հոկտեմբերի 20-ին հաստատված՝ «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչները հաստատելու մասին» N 144-Ա/1 հրամանը և 2015 թվականի դեկտեմբերի 10-ի՝ «Ընտանեկան բռնության

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը խիստ թերի է, որպեսզի լիարժեքորեն ապահովի ընտանեկան բռնությունից տուժած երեխայի պաշտպանությունը, երեխան հաճախ բախվում է կրկնակի զոհացման իրական ռիսկերի: Մասնավորապես, բռնությանն ականատես, բռնության միջավայրում գտնվող երեխան չի ճանաչվում բռնությունից տուժած, հետևապես դուրս է մնում պետության հոգածությունից, չեն գործում երեխայի հանդեպ բռնության դեպքի մասին տեղեկությունն օպերատիվ հաղորդելու, բռնության միջավայրից երեխային անհապաղ հեռացնելու, երեխայի ընտանեկան բռնության դեպքերով ընտանիքի անդամի իրավունքների սահմանափակում կիրառելու առանձին ընթացակարգեր և այլն[64]:

Ընտանեկան բռնության մասին օրենքի համաձայն՝ ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառումը (ներառյալ կրթական, առողջապահական հաստատությունների վիճակագրություն) վարում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ ՀՀ կառավարության 10.10.2019 թ. թիվ 1381-Ն որոշմամբ սահմանված կարգով[65]:

Ի կատարումն վերոհիշյալ օրենքի և հանրային իրազեկման նպատակով իրականացվել են հետևյալ ծրագրերն ու միջոցառումները.

1. Բռնության բոլոր ձևերի և դրանց բացառման մասին իրազեկվածության բարձրացման նպատակով 2021 թվականի ընթացքում ՀՀ ԿԳՄՍ կողմից իրականացվել են ուսումնական հաստատություններում բռնության և բուլլինգի նվազեցմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը (ՀՄԿ) Շվեդական «Global to Local» կազմակերպության հետ իրականացրել է «Հանրակրթական դպրոցներում բուլլինգի նվազեցման ծրագիրը», որի շրջանակներում ՀՀ Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերի մեկական դպրոցում և Երևանի 2 դպրոցում անցկացրել է բուլլինգի նվազեցմանը նպաստող վերապատրաստման դասընթացներ և միջոցառումներ ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների և ծնողների հետ: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են բուլլինգի հիմնախնդրին նվիրված ինտերակտիվ ներկայացումներ:

---

ենթարկված անձանց ուղղորդման ուղեցույցը հաստատելու մասին» N 177-Ա/1 հրամանը, 2015 թվականի սեպտեմբերի 10-ին հաստատված ՀՀ կառավարության «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» N 1044-Ն որոշումը, 29.03.2019 թ.՝ 333-Ն որոշումը՝ ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը սահմանելու մասին, 28.12.2018 թ. Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին ՀՀ վարչապետի որոշումը:

[64]Ընտանեկան բռնության հարաբերություններում երեխաների իրավունքների պաշտպանության պրակտիկան համավարակի ժամանակահատվածում: Երևան, 2021թ.: https://www.osf.am/wp-content/uploads/2021/12/Ընտանեկան-բռնության-հարաբերություններում-երեխաների-իրավունքների-պաշտպանության-պրակտիկան-համավարակի-ժամանակահատվածում.pdf

[65] Սույն հետազոտության շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ դեռևս կենտրոնացված հաշվառման կարգը վերջնականապես մշակված չէ և ուղարկվել է շահագրգիռ գերատեսչություններին՝ կարծիքի: Այն 2-րդ անգամ է շրջանառվում՝ ելնելով այն փաստից, որ Քրեական օրենսգիրքը ուժի մեջ է մտել 2022 թ. հուլիսի 1-ին:

Ծրագրի պիլոտային փորձարկումն ամփոփելուց և վերջնական շտկումներն իրականացնելուց հետո այն կներդրվի հանրապետության բոլոր մարզերում:

2. ՀՄԿ-ն, «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի համագործակցությամբ և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ, 2021 թվականին ՀՀ ԿԳՄՍ կողմից իրականացրել է «Գենդերային ինտեգրման խթանում ուսուցիչների կարողությունների զարգացման ծրագրերում և համայնքային ներգրավման նախաձեռնություններում» ծրագիրը, որի շրջանակներում մշակված վերապատրաստման դասընթացների մոդուլներից մեկը վերաբերում էր գենդերազգայուն մանկավարժությանը և շեշտադրում էր սեռով պայմանավորված բռնությունների նվազեցման կարևորությունը: Վերջինս ներդրվել է ՀՄԿ-ի կողմից իրականացվող «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի վերապատրաստման մոդուլների ցանկում: Ծրագրի երկու փուլում գենդերազգայուն մանկավարժության վերաբերյալ դասընթաց է անցել հանրապետության 120 դպրոցի 2861 մանկավարժ:

3. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստումների շրջանակում վերապատրաստվել է շուրջ 7000 ուսուցիչ: Ուսուցիչները վերապատրաստվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված՝ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշչի և օրինակելի ծրագրերի համաձայն, որոնք պարտադիր են բոլոր վերապատրաստող կազմակերպությունների համար: Ծրագրերում ներառված են «Ընտանեկան բռնության կանխարգելման խնդիրները» և «Ընտանեկան բռնության իրավիճակներ և լուծման տարբերակներ» թեմաները:

4. 2021 թվականին «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում իրականացրել է «Բռնության կանխարգելման միջոլորտային ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների զարգացում՝ հիմնված երեխայազգայուն և գենդերային զգայուն մոտեցումների վրա» ծրագիրը՝ երեխաներին բռնությունից պաշտպանելու, պատշաճ արձագանքման կառուցակարգերն ամրապնդելու նպատակով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մարզային հանդիպումներ «Համագործակցային աշխատանքի կարողությունների զարգացում՝ ի նպաստ երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման» թեմայով, որոնց մասնակցել են նաև կրթության ոլորտի մասնագետներ:

5. ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ բոլոր մարզերում իրականացրել է «Համագործակցային աշխատանքի կարողությունների զարգացում՝ ի նպաստ երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման» դասընթաց-քննարկումը՝ ուղղված երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման, արձագանքման և աջակցության արդյունավետության բարձրացմանը՝ համագործակցային մեխանիզմների զարգացմամբ (մասնակիցների թիվը՝ 202):

Միաժամանակ, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի և «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման համատեքստում, նախաձեռնվել է հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման, ուղղորդման և արձագանքման ընթացակարգերի մշակման գործընթաց (ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գրասենյակի աջակցությամբ):

Այս հետազոտության շրջանակներում ՀՀ ԱՍՀՆ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականից նախարարության սկսած «Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի շրջանակներում ընտանիքում բռնության ենթարկված անձանց անհրաժեշտ ծառայություններ տրամադրելու նպատակով իրականացվում է երեք միջոցառում.

- «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ».
- «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ».
- «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ժամանակավոր աջակցություն»:

Թեև կատարվել են օրենսդրական փոփոխություններ, և իրականացվել են սոցիալական բնույթի, ինչպես նաև հանրային իրազեկման բազմաթիվ ծրագրեր, այնուամենայնիվ, սահմանափակ գործողություններ են իրականացվում երեխաների նկատմամբ բռնությունների դեպքերի կանխարգելման, վաղ հայտնաբերման և հաղորդման վերաբերյալ[66]: Կանխարգելիչ միջոցառումների համակարգի կարևոր բաղադրիչներից է «թեժ գիծ» հեռախոսահամարների գործարկումը[67]», ինչը բռնության ենթարկված անձին հնարավորություն է տալիս անհապաղ կապվել աջակցության կենտրոնի աշխատողի (կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի) հետ և ստանալ անհրաժեշտ օգնություն: «Թեժ գծերն» ընտանեկան բռնության դեպքերի առաջնային գնահատման և անձի կարիքների հաշվառման օպերատիվ գործիք են, ինչպես նաև երեխայի լսված լինելու իրավունքի իրացման նախապայման[68]: Երեխաների համար առանձնացված միասնական «թեժ գիծ» անհրաժեշտ է ապահովել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության[69], Արդարադատության նախարարության, Արտակարգ իրավիճակների

---

[66] Երեխայի պաշտպանության ինդեքս: Հայաստան, 2016, էջ 14, պարբ. 4: Հասանելի է հետևյալ հղումով. http://mankutyun.am/resursview/18/

[67] Այս մասին ասել է նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն Բռնության բոլոր ձևերից երեխայի պաշտպանված լինելու իրավունքի վերաբերյալ թիվ 13 (2011) Ընդհանուր մեկնաբանության մեջ՝ շեշտելով, որ շուրջօրա գործող անվճար «թեժ գծի» ծառայությունը երեխայի նկատմամբ բռնության մասին ահազանգման մեխանիզմ է:

[68] https://www.osf.am/wp-content/uploads/2021/12/Ընտանեկան-բռնության-հարաբերություններում-երեխաների-իրավունքների-պաշտպանության-պրակտիկան-համավարակի-ժամանակահատվածում.pdf

[69]Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ ներկայումս ՀՀ ԱՍՀՆ թեժ գիծը ծառայում է նաև երեխաների հիմնահարցերին առնչվող հարցերը ներկայացնելուն, սակայն առաջիկա

նախարարության, ՀՀ ոստիկանության շրջանակներում: Ներկայումս զոհերը դեպքի մասին հայտնելու և պաշտպանություն խնդրելու համար զանգում են ոստիկանության ընդհանուր համարին: Նշված օրենքը հստակ սահմանում է, որ ընտանեկան բռնության ահազանգին արձագանքող ոստիկանը պետք է գաղտնի զրույց ունենա զոհի և ներկա գտնվող երեխաների հետ: Ոստիկանությունը պետք է նաև որոշի վնասվածքների ծանրության աստիճանը, գնահատի իրավիճակի ռիսկայնությունը և/կամ ձերբակալի բռնարարին, անհետաձգելի միջամտության որոշում կայացնի, կամ բռնարարին նախազգուշացում տա:

ՀՀ-ում պաշտոնական վիճակագրությունը չի արտացոլում երեխաների ընտանեկան բռնության դեպքերի իրական թիվը, քանի որ երեխայի նկատմամբ բռնության դրսևորումներին հատուկ է առավել բարձր լատենտայնությունը: Այնուամենայնիվ, այս և նախորդ տարիների վիճակագրական պատկերը հետևյալն է. 2021 թվականին անչափահասների նկատմամբ բռնության 34 դեպք է գրանցվել, իսկ 2022 թվականի հուլիսի դրությամբ՝ 33 դեպք: Եթե անցած տարի մեծ է եղել սեռական բնույթի հանցագործությունների թիվը (2021 թ.՝ 16 դեպք, 2022 թ.՝ 7 դեպք), ապա այս տարի շատացել են ֆիզիկական բռնության, մասնավորապես՝ ծեծի դեպքերը: Ըստ վիճակագրության՝ գրանցված դեպքերը թեև նվազել են, բայց ավելացել են ահազանգերը բռնության ենթարկված երեխաներից: Ոստիկանության ներկայացուցչի կարծիքով՝ երեխաներն այսօր ավելի տեղեկացված են, ավելի շատ բան գիտեն իրենց իրավունքների մասին[70]:

*Վնասակար պրակտիկա*

Վնասակար պրակտիկայի վերաբերյալ Կոմիտեի մտահոգությունը վերաբերում է[71].

- եզդիական համայնքի աղջիկների վաղ ամուսնություններին, որոնք կատարվում են նախքան ամուսնության օրինական տարիքը լրանալը:

Եզդի համայնքում աղջիկներն ամուսնանում են 14-15 տարեկանում՝ չստանալով կրթություն և կյանքի համապատասխան փորձառություն, ինչն էլ, իր հերթին. հանգեցնում է մեկուսացած կյանք վարելուն և կյանքի տարբեր ոլորտներում աղջիկների և կանանց չինտեգրվելուն: Վաղ ամուսնությունը նաև խոչընդոտում է զարգացման, կրթության և այլ իրավունքների իրացմանը, ինչպես նաև նպաստում է գենդերային պատկերացումների խեղաթյուրված ձևավորմանը:

Այս առնչությամբ, բացի ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեի առաջարկությունից, Հայաստանը պետք է կատարի միջազգային այլ պարտավորություններ[72],

---

ռազմավարական պլանավորման շրջանակներում դիտարկվելու է նաև առանձնացված «թեժ գծի» ներդրման հնարավորությունը:

[70]Նաիրա Մայիլյան, Հայաստանի հանրային ռադիո, ԲռնությանԿ "https://hy.armradio.am/2022/07/23/%D5%A2%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%, 23 ությանԿ "https://hy.arՀայաստանիԿ "https:/ռադիոստանիԿ "https:: /դիոստանիԿ "httpլդիոստանյութիանիԿ "https:/

[71] Այս մասին արձանագրվել է նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի 2016 թվականի զեկույցում: Committee on the Elimination of Discrimination against Women, Concluding observations on the combined fifth and sixth periodic reports of Armenia, /C/ARM/CO/5-6, 25.11.2016. P. 14:

[72] «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա», ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներ (մինչև 2030 թվականը):

որոնց իրականացման ուղղությամբ կատարել է օրենսդրական փոփոխություններ: Դրանցից են.

- ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով:

- ՀՀ ընտանեկան օրենսգրքում 30.04.2013 թվականին փոփոխություն կատարվեց՝ կապված ամուսնության տարիքի հետ (նախկին տասնյոթի փոխարեն սահմանվեց տասնութը)[73]: ՀՀ ընտանեկան օրենսգքրի 10-րդ հոդվածի համաձայն ամուսնության կնքման համար անհրաժեշտ են, ի թիվս այլոց, զույգերի ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքին հասնելը, բացառությամբ օրենսգրքով սահմանված դեպքերի[74]:

ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված է, որ սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ քրեորեն պատժելի է: Վերջինիս համար սահմանված է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկու հարյուր հիսնապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով[75]:

Չնայած ՀՀ ընտանեկան օրենսգրքում կատարված փոփոխությանը՝ պետական մարմիններում չկա որևէ ընթացակարգ, որը հնարավորություն կտար վերահսկել՝ ամուսնությունները պարտադրվա՞ծ են, թե՞ ոչ: Բացի դրանից՝ շատ տարածված են չգրանցված ամուսնությունները, ինչը ավելի է բարդացնում վերահսկողությունը[76]:

ՀՀ արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) գործակալության կողմից ըստ տարիքային և ազգային պատկանելության գրանցված ամուսնությունների վերաբերյալ վիճակագրություն չի վարվում[77]:

Հարցը, բացի օրենսդրական կողմից, պարունակում է նաև սոցիոէթնիկ կողմ՝ ելնելով սոցիոէթնիկ որոշակի առանձնահատկություններից. նման դեպքերը թեև առկա են, սակայն կրում են լատենտային բնույթ[78]:

---

[73] Այս օրինագծին դեմ էր արտահայտվել նաև Հայաստանի եզդիների միության նախագահ Ազիզ Թամոյանը՝ նշելով, որ եզդի աղջիկները սովորույթի ուժով ամուսնանում են տասնչորսից տասնհինգ տարեկանում, և այս քայլով ՀՀ կառավարությունը դժբախտացնում է եզդի աղջիկներին: Տե՛ս https://epress.am/2016/01/29/եզդի-կանանց-կրթության-իրավունքը-հայա.html?fbclid=IwAR2PDUdb-cWcjbkm19r7m9PDNJJyR8QgCFRHA6krKYp9R7DO2MHyCcPDyDA

[74] Ամուսնությունը հնարավոր է նաև տասնյոթ տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, ինչպես նաև հնարավոր է ամուսնությունը տասնվեց տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, նաև ամուսնացող մյուս անձի առնվազն տասնութ տարեկան լինելը:

[75] ՀՀ Քրեական օրենսգիրք, 200-րդ հոդված:

[76] Բրոյան, Ի., Փարյան, Փ., Մարտիրոսյան, Հ., Հովհաննիսյան, Է.,Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, 2020. https://epfarmenia.am/sites/default/files/Document/Issues_Related_To_The_Rights_of_And_Opportunities_For_Yezidi_Girls_Residing_In_Armenia_ARM.pdf

[77] Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2022 թ. հունիսին ներկայացված տեղեկության:

Այս ոլորտում մոտեցումը փոխելու համար իրականացվել են նաև կրթական ծրագրեր, մասնավորապես, 2008-2009 ուսումնական տարվանից[79] Հայաստանի Հանրապետության դպրոցների 8-9-րդ դասարաններում, իսկ 2010 թվականից՝ նաև 10-11-րդ դասարաններում ԿԳ նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տրամադրվում է 14 դասաժամ: «Առողջ ապրելակերպ» դասընթացի հիմնական նպատակն է սովորողների մեջ ձևավորել սեփական և այլոց առողջությունը որպես կարևորագույն արժեք գնահատելու որակ և այն պահպանելու համար գիտելիքների, կարողությունների ու հմտությունների վրա հիմնված անվտանգ վարքագիծ: Դասընթացում ներառված են վերարտադրողական առողջության և սեռական դաստիարակության վերաբերյալ թեմաներ, որոնցից են՝ «Սեռական հասունացում», «Սեր», «Սերը որպես սեռերի ներդաշնակ փոխհարաբերությունների հիմք», «Վերարտադրողական առողջություն», «Անխոհեմ սեռական վարքագծի հնարավոր հետևանքները», «Սեռավարակներ, ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի կանխարգելում» և այլն:

Ընդհանուր առմամբ 4 տարվա ընթացքում «Առողջ ապրելակերպ» դասընթացին հատկացված 56 ժամից շուրջ 25-ը նվիրված է վերարտադրողական առողջությանը, դեռահասի սեռական առողջության պահպանման հարցերին:

Դասընթացն իրականացվում է «Բժշկական օգնության և սպասարկման մասին», «Կրթության մասին» և «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքների համաձայն, որտեղ ամրագրվում է, որ. «....յուրաքանչյուր ոք, ներառյալ դեռահասը, իրավունք ունի տեղեկություններ ստանալու իր սեռական առողջության պահպանման հարցերի, այդ թվում՝ ՄԻԱՎ վարակի և սեռավարակների հետ կապված վտանգների մասին»:

Կոմիտեի այս առաջարկությունը մասամբ կատարվել է:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.** Եզդի աղջիկների շրջանում շարունակել կրթական ծրագրերի իրականացումը, մշակել և հետևողականորեն իրականացնել եզդի աղջիկների առևանգումների դեմ ուղղված ծրագրային քաղաքականությունը:

## ՄԱՍ 5. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ

Այս ոլորտի կարևորագույն բարեփոխումներից են.

- ինտեգրված սոցիալական ծառայությունների և սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումը: Դա ուղղված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին, սոցիալական հատուկ խմբերին և անձանց

[78] ՀՀ ՄԻՊ արտահերթ հրապարակային զեկույց Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2018. https://ombuds.am/images/files/0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf

[79] Սույն հետազոտության շրջանակներում ՀՀ ԿԳՄՍ-ից ստացված տեղեկության համաձայն:

նպատակային աջակցություն տրամադրելուն՝ կարիքների վրա հիմնված և դեպքի վարման գործընթացի շրջանակներում.

- նպաստների համակարգի բարելավումը, որի նպատակը սոցիալապես անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելն է կամ դրա վատթարացումը կանխելը[80]: Ավելացել է երեխա ունեցող ընտանիքների անապահովության գնահատման հարցում երեխաների առկայության հանգամանքի կշիռը՝ դիտարկելով նման ընտանիքներին աղքատության տեսանկյունից ավելի ռիսկային,
- երեխաների խնամքի ու պաշտպանության այլընտրանքային ձևի՝ խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրումը[81] [82]:

Ոլորտը կարգավորող վերաբերելի օրենսդրական ակտերն են[83].

- Ընտանեկան օրենսգիրքը. սահմանում է ԱԾԽՄ երեխաների իրավունքների պաշտպանությունը և նրանց նկատմամբ խնամքի ընտրվող ձևերն ու առաջնահերթությունը.
- ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշումը, որի համաձայն, ի թիվս այլ հարցերի, կարգավորված է երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը.

- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշումը, որի համաձայն, ի թիվս այլ հարցերի, կարգավորված է բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններ երեխաների ուղեգրումը.

---

[80] Ըստ ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2021 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի՝ հաշմանդամ երեխաների համար տրվում է 37,000 դրամ դրամ (2021 թվականի 26,500 դրամի փոխարեն), մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ՝ 28,600 դրամ (2021 թվականի 26,500 դրամի փոխարեն): Microsoft Word - e2910f25380af18b6dbd62139c1b4c9f8e59c094f3164743882cb16d4661f6a6 (parliament.am)

[81] ՀՀ ՄԻՊ արտահերթ հրապարակային զեկույց Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան 2018թ.:
0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf (ombuds.am)
2017 թվականի դեկտեմբերի դրությամբ խնամատար 21 ընտանիքում խնամք է ստանում 25 երեխա:

[82] ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2021 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի համաձայն՝ 2021 թվականին երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիք է վերադարձել 10 երեխա, ժամանակավոր խնամք իրականացնող կենտրոններից կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորվել է 48 երեխա: Հատուկ ուշադրություն է դարձվել երեխաների այլընտրանքային խնամքի ձևերի զարգացմանը: 2021 թվականի 61 խնամատար ընտանիքում խնամք է ստացել 88 երեխա, որոնցից 9-ը հաշմանդամություն ունեցող երեխաներ են, որոնք խնամք են ստանում մասնագիտացված խնամատար ընտանիքներում: 2021 թվականի ընթացքում եղել է 22 որդեգրում, որոնցից 17-ը՝ ներպետական, 5-ը՝ արտերկիր. Microsoft Word - e2910f25380af18b6dbd62139c1b4c9f8e59c094f3164743882cb16d4661f6a6 (parliament.am)

[83] ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի նիստի N 18 արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգը:

- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի մայիսի 3-ի թիվ 54-Ն հրամանը, որով հաստատվել է ԱՍՀՆ ներկայացվող՝ երեխայի խնամքի տրամադրման մասին եզրակացության ձևը, որտեղ հատուկ կետ է նախատեսվել խնամքի որևէ տեսակի տրամադրման նպատակահարմարության, իսկ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու վերաբերյալ եզրակացության դեպքում՝ նաև այլընտրանքային խնամքի տրամադրման անհնարինության հիմնավորման համար.

- ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի նիստի N 18 արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգը.
- ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն որոշմամբ սահմանվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների այլընտրանքային խնամքի տրամադրման սկզբունքները և չափորոշիչները, ինչպես նաև կարգավորված են այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման հետ կապված հարաբերությունները[84].
- ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 13-ին հաստատված «Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու, խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ուսուցման, որակավորման և վերապատրաստման, խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողության կարգերը, խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով դրամական միջոցների վճարման կարգը և չափը, խնամատարության պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 751-Ն որոշումը[85]:

Ըստ ՀՀ ԱՍՀՆ-ից սույն հետազոտության շրջանակներում ստացված տեղեկատվության՝ նախարարության ենթակայության ներքո գտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա հաստատություններում, մանկատներում և գիշերօթիկներում խնամվող երեխաների թվային պատկերը հետևյալն է. երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող 5 սոցիալական հաստատություններում 2022

[84] Տե՛ս ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն որոշում. https://www.arlis.am/documentview.aspx?docid=151079

[85] Հարց ու պատասխան/Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (mlsa.am)

թվականի հուլիսի 1-ի դրությամբ խնամվում են 577 շահառու, գիշերօթիկ հաստատություններ ՀՀ-ում 2019 թվականից չեն գործում։

Կոմիտեի արծարծած խնդրի լուծմանն ուղղված ծրագրերից են՝

- 01.01.2022-30.06.2022 թթ. ժամանակահատվածում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցությամբ իրականացվել են խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատակիցների համար դասընթացներ «Իրավունքի ուժ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (այսուհետ՝ ԽՀՀ) և միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՄՍԾՏԿ) 54 աշխատակցի ընդգրկմամբ երկօրյա անցկացվել է դասընթաց՝ Երեխաների հիմնահարցերի ոլորտ, Պատմական ակնարկ և առկա իրավիճակ՝ ապաինստիտուցիոնալացման համատեքստում, Երեխաներին տրամադրվող ծառայություններ, Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հոգեբանական առանձնահատկությունները և խնդիրները, երեխայի հետ աշխատանքի հոգեբանական սկզբունքները, Ընտանեկան տիպի այլընտրանքային խնամքի կազմակերպում (որդեգրում, խնամակալություն խնամատարություն) թեմաներով.

- ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվել են կարողությունների զարգացման դասընթացներ. 144 մասնակցի ընդգրկմամբ՝ ՀՀ Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի և Սյունիքի համայնքային 31 սոցիալական աշխատողների համար անցկացվել է երկօրյա դասընթաց «Երեխաների անհարկի բաժանումն ընտանիքից և այլընտրանքային խնամքի տարբերակները ՀՀ-ում» թեմայով, նույն թեմայով նույնպիսի դասընթաց է անցկացվել ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի և Սյունիքի մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժինների պետերի և խոշորացված համայնքների ԽՀՀ 39 ներկայացուցիչների համար։ Նույն դասընթացն իրականացվել է նաև Շիրակի, Լոռու մարզերի խոշորացված համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների համար (17 մասնակից) : Բերդի տարածաշրջանի երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի մասնագետների (դպրոցներից, մանկապարտեզներից, ՄՍԾՏԿ-ից և ՀԿ-ներից 32 մասնակից) համար իրականացվել է պետության կողմից պատվիրակված՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (այսուհետ՝ ԿԴԻՀ) երեխաների ցերեկային խնամքի ծառայության շրջանակներում երկօրյա դասընթաց «Հուզական այրում և մասնագիտական ինքնախնամք» թեմայով։ Բերդի տարածաշրջանի երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի մասնագետների (դպրոցներից, մանկապարտեզներից, ՄՍԾ ՏԿ-ից և ՀԿ-ներից) համար (25 մասնակից) ԿԴԻՀ երեխաների ցերեկային խնամքի ծառայության շրջանակներում անցկացվել է երկօրյա դասընթաց «Երեխաների տարիքային զարգացում. տարիքային ճգնաժամերը և դրանց հաղթահարման մեխանիզմները» թեմայով։

***Որդեգրում***

ՀՀ օրենսդրությունը չի ամրագրում որդեգրման գործի վերանայման կենտրոնացված համակարգ:

2017 թվականի դեկտեմբերին ընդունված Ընտանեկան օրենսգրքի փոփոխություններով բարելավվել է որդեգրման ինստիտուտը: Այսպես, առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման հետ կապված բոլոր որոշումները հիմնված են երեխայի լավագույն շահի ապահովման և նրա կարիքների բազմամասնագիտական գնահատման վրա և պետք է համապատասխանեն հետևյալ երկու հիմնական նպատակներին.

1) ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքն ու դաստիարակությունն ընտանեկան միջավայրում, իսկ անհնարինության դեպքում՝ դրան առավել մոտ միջավայրում.

2) ապահովել երեխայի կրթությունը, խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու համար անհրաժեշտ պայմանները, ներառյալ՝ սոցիալական ու բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները, հաշվի առնելով «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները: Օրենսգրքի փոփոխությամբ որդեգրման եզրույթի նոր սահմանում է տրված: Ըստ այդմ՝ որդեգրումը սահմանված է որպես դատական ակտ, որով որդեգրվողը ձեռք է բերում կենսաբանական կապերին համարժեք ընտանեկան կապեր, որի արդյունքում որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները: Որդեգրումն իրականացվում է՝ ելնելով երեխայի լավագույն շահից՝ որդեգրողի և որդեգրվողի համադրելիության գնահատման հիման վրա: Վերանայվել են նաև որդեգրումը վերացնելու հիմքերը, որոնց հիմքում ընկած է երեխայի լավագույն շահը: Նախատեսվում է նաև տարիքային շեմ՝ որդեգրողի և որդեգրվողի միջև:

Քննարկվող հարցի հետ կապված վերաբերելի ակտերից հիշատակման ենթակա է «Որդեգրել ցանկացող անձանց նախապատրաստական դասընթացների ծրագրի բովանդակությունը, դրան ներկայացվող պահանջները, ծրագրի բովանդակությունը սահմանող իրավասու մարմինը, ծրագրի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» 23 մայիսի 2019 թվականի N 630-Ն ՀՀ կառավարության որոշումը:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ սույն հետազոտության շրջանակներում ստացված տեղեկատվության՝ որդեգրման գործընթացին առնչվող նոր փոփոխություններն առաջիկայում կներկայացվեն ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխությունների շրջանակում: Այս մասին հաստատվել է նաև ՀՀ արդարադատության նախարարության՝ սույն հետազոտության շրջանակներում ստացված տեղեկատվությամբ: Մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի նշված նախագիծը հաստատվելուց հետո անդրադարձ է կատարվելու որդեգրման գործընթացը կարգավորող ենթաօրենսդրական ակտի նախագծի մշակմանը, որի նախնական տարբերակն առկա է: Նշված նախագծերը նպատակ են հետապնդում կանոնակարգել երեխաների որդեգրման ընթացակարգերը՝ համապատասխանեցնելով դրանք «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի 29.05.1993 թ. կոնվենցիայի սկզբունքներին և պահանջներին:

Մինչդեռ ներկայումս ՀՀ արդարադատության նախարարությունը երեխաների որդեգրման գործընթացներում արդեն իսկ ապահովում է կոնվենցիոն հիմնարար

պահանջների կատարումը մինչև վերը նշված նախագծերի ընդունումը: Մասնավորապես, իրականացվում են որդեգրման ենթակա երեխաների և որդեգրել ցանկացող անձանց համադրման աշխատանքներ, բացառվում են կենսաբանական ծնողների և որդեգրողների միջև նախնական պայմանավորվածությամբ երեխաների որդեգրումները, որդեգրմանը զուգորդող գործընթացներն իրականացվում են համագործակից պետությունների կենտրոնական մարմինների կամ հավատարմագրված կազմակերպությունների միջև փոխադարձ պայմանավորվածությամբ՝ բացառելով քաղաքացիների ինքնուրույն նախաձեռնությունները, որդեգրման ենթակա երեխաների տվյալները անմիջականորեն չեն տրամադրվում որդեգրել ցանկացող անձանց:

### *Անկախ մարմնի կողմից մշտադիտարկման համակարգ*

Համաձայն Ընտանեկան օրենսգքրի՝ որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի և մարզպետարանի կողմից՝ համատեղ, իսկ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից: ՀՀ-ից այլ պետությունում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում, եթե այլ բան նախատեսված չէ մյուս պետության օրենքով: Որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողության նպատակն է նպաստել երեխայի ինտեգրմանը և բարեկեցությանը, ինչպես նաև իրավունքների և շահերի ոտնահարման կանխարգելմանը որդեգրողի ընտանիքում: Որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է որդեգրման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում: Վերահսկողության ժամանակահատվածում որդեգրողը պարտավոր է աջակցել վերահսկողություն իրականացնող մարմնին որդեգրված երեխայի մասին տեղեկատվություն ձեռք բերելու գործընթացում[86]:

### *Ընտանիքից զրկված երեխաներ*

ՀՀ ընտանեկան օրենսգրքով նախատեսվում է երեխայի՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքը:

Երեխայի իրավունքների պաշտպանության 2022 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության 30 սեպտեմբերի 2021 թվականի N 1622 որոշմամբ սահմանվում են բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա հաստատություններում խնամք ստացող երեխաների ընտանիք վերադարձի

[86] ՀՀ ընտանեկան օրենսգիրք, 128.1-ին հոդվածը լրացվել է 21.12.17-ին:

ապահովումը, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը, նրանց հետագա ինքնուրույն կյանքի կազմակերպման և ներառման գործընթացի նպատակով բնակելի տարածությունով ապահովելը՝ բնակարանների վարձակալությունը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, նրանց ընտանիքների հիմնախնդիրների վերհանումը, գնահատված կարիքների հիման վրա սոցիալական, հոգեբանական, մանկավարժական, առողջապահական, մասնագիտական կողմնորոշման, իրավական աջակցության տրամադրումը, ինչպես նաև շուրջօրյա խնամքի հաստատություն երեխայի մուտքի կանխարգելումը՝ այլընտրանքային ծառայությունների ցանցի, այդ թվում՝ խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացման միջոցով:

2020 թվականի հունվարից, պետության կողմից պատվիրակման միջոցով, 10 մարզում և Երևան քաղաքում ոլորտային հասարակական կազմակերպություններն իրականացնում են «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ», ներառյալ «Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրում» ծրագիրը, որի շրջանակներում շահառու երեխաները և նրանց ընտանիքները ստանում են ծրագրի նպատակներից բխող ծառայություններ (մասնագիտական աջակցություն, սոցիալական աջակցություն՝ սննդի զամբյուղ և էլեկտրաէներգիայի փոխհատուցում, բնաիրային փաթեթ):

2021 թվականի սեպտեմբերի դրությամբ շուրջ 327 երեխա ընդգրկված է «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ» ծրագրում, իսկ շուրջ 86 ընտանիք՝ «Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրում» ծրագրում[87]:

Կոմիտեի առաջարկությունը կատարվել է մասամբ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ**. Մշակել որդեգրման գործընթացի հաստատման կենտրոնացված համակարգին ուղղված օրենսդրություն:

## ՄԱՍ 6. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ, ՏԱՐՐԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

[87] Տե՛ս Երեխայի իրավունքների պաշտպանության 2022 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին 2021 թվականի N 1622-Լ կառավարության որոշումը. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155980

Կոմիտեի՝ հաշմանդամություն ունեցող երեխաների ապաինստիտուցիոնալացման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման վերաբերյալ մտահոգության հետ կապված՝ իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Երկիրը որդեգրել է ապաինստիտուցիոնալացման քաղաքականությունը, որը կոչված է երեխայի խնամքի և կրթության շուրջօրյա հաստատությունների փակմանը կամ վերակազմավորմանը՝ նպատակ ունենալով երեխաների խնամքը և կրթությունը կազմակերպել ընտանիքահեն և համայնքահեն միջավայրում: Ապաինստիտուցիոնալացման արդյունքում երեխայի խնամքի կազմակերպման ամենանախընտրելի ձևը երեխայի կենսաբանական ընտանիքն է: Կենսաբանական ընտանիքում հետագա խնամքը կազմակերպելու անհնարինության դեպքում երեխայի խնամքը կազմակերպվում է այլընտրանքային ձևերով[88].

- Ընտանեկան օրենսգրքում կատարվել են փոփոխություններ՝ ուղղված խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը[89], նաև ընդունվել են խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու, խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ուսուցման, որակավորման և վերապատրաստման, խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողության կարգերը, խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով դրամական միջոցների վճարման կարգը և չափը, խնամատարության պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի թիվ 459-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումը.

- 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը: Օրենքը նախատեսում է բժշկական մոդելից սոցիալական մոդելին անցում կատարելու հիմքեր: Միաժամանակ, ուսումնասիրվող հարցի համատեքստում կարևոր կարգավորումներ են նախատեսվում, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման հիմքերը, ֆիզիկական միջավայրի մատչելիությունը, համընդհանուր դիզայնի սկզբունքները, խելամիտ հարմարանքների, հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի[90] և համայնքում ներառվելու իրավունքի հիմքերը:

---

[88] Տե՛ս ՀՀ կառավարության N 551 որոշումը: Նշված որոշմամբ երեխայի այլընտրանքային խնամքի տեսակներն են՝ 1) որդեգրումը, 2) խնամակալությունը և հոգաբարձությունը, խնամատարությունը (երեխայի խնամքի կազմակերպումը խնամատար ընտանիքի որևէ տեսակի միջոցով), երեխայի խնամքը սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում, 5) երեխայի խնամքը երեխաների աջակցության կենտրոնում, 6) երեխայի խնամքը խնամքի գիշերօթիկ հաստատությունում, 7) երեխայի խնամքը բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ (մասնագիտացված) հաստատությունում՝ նախապատվությունը տալով ընտանեկան տիպի հաստատություններին, իսկ հատուկ կարիքներ ունեցող երեխաների դեպքում՝ մասնագիտացված հաստատությանը. https://bit.ly/3qRS7Q0

[89] ՀՀ ընտանեկան օրենսգիրք: Հոդվածներ 137-140: https://www.arlis.am/documentview.aspx?docid=66138

[90] Պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական ներառումն ապահովելու համար կիրականացվեն համակարգված, հասցեական և համալիր միջոցառումներ. միջազգային լավագույն փորձի հիման վրա կստեղծվեն անկախ կյանքի կենտրոններ, որոնք ծառայություններ կմատուցեն պատերազմի պատճառով հաշմանդամություն ձեռք բերած անձանց: Անկախ կյանքի կենտրոններում զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց համար կիրականացվեն ինքնուրույն

Մինչև 2025 թ. նախատեսվում է համընդհանուր ներառականացում կրթության ոլորտում[91]: Ներառականացման աշխատանքներն սկսված են նախադպրոցական և հանրակրթության մակարդակներով, մասնավորապես.

1. ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն որոշմամբ հաստատվել է «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին կարգը», համաձայն որի՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ից կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նախադպրոցական որոշ ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվելու է պետական բյուջեից:

   ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 598-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը»: 2022 թվականի առաջին կիսամյակում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Նախադպրոցական տարիքի՝ կրթության և զարգացման առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման գործիքակազմի մշակումը, ինչպես նաև նրանց հետ աշխատող նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստման մոդուլների մշակում.

- Նախադպրոցական տարիքի՝ կրթության և զարգացման առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության և զարգացման գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի և ձևաթղթերի մշակում (նախադպրոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ, մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներ, անհատական թղթապանակ, անհատական ուսուցման և զարգացման պլան).

- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ ԿԳՄՄՆ) կողմից մշակվել և շրջանառվում է «Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՄ) նախարարի հրամանի նախագիծը:

---

կենցաղավարման ծրագրեր, մասնագիտական կողմնորոշման, կարիերայի պլանավորման ծառայություններ և այլն: Տե՛ս Անկախ կյանքի կենտրոններ՝ պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած անձանց համար (socservice.am)

[91] Սույն հետազոտության շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն:

Հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում հանրակրթության ոլորտում անցում է կատարվել համընդհանուր ներառական կրթության համակարգին, ներդրվել են  երեխայի կրթական կարիքներին արձագանքմանեռաստիճան համակարգ, ուսուցչի օգնականի հաստիք: ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 141-Ն որոշմամբ հաստատվել է հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի: Ստեղծվել է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը, Հանրապետության 7 մարզում և Երևան քաղաքում հատուկ դպրոցների վերակազմակերպման միջոցով ստեղծվել են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության  կենտրոններ (17 կենտրոն), ՀՀ Տավուշի, Արարատի և Վայոց ձորի մարզերում, որտեղ չեն գործել հատուկ դպրոցներ, դրամաշնորհի միջոցով մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցումը պատվիրակվել է այլ կազմակերպություններին:

2022 թվականի փետրվարի 9-ին ընդունված ««Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի (ՀՕ-35-Ն) 20-րդ հոդվածով նախատեսվել է դրույթ, որի համաձայն՝ «3.1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով պետական բյուջեի միջոցներից տրամադրվում է նպատակային ֆինանսավորում»:

Մասնագիտական վերապատրաստումների ուղղությամբ 2021 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում շարունակական վերապատրաստումներ և մենթորական աջակցություն է ստացել Երևան քաղաքի և ՀՀ Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի՝ ծրագրում ընդգրկված 120 դպրոցի 2861 մանկավարժ:

2. Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվել է մասնագիտական կարողությունների հզորացմանն ուղղված 324 վերապատրաստման դասընթաց տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աջակցության ծառայություններ տրամադրող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումներ իրականացնող, ինչպես նաև հանրակրթական ուսումնական շուրջ 362 հաստատությունների 7513 մանկավարժական աշխատողների համար:

3. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստումների շրջանակում շուրջ 7000 ուսուցիչ վերապատրաստվել է, այդ թվում «Ներառական կրթություն» 9-ժամյա մոդուլային դասընթացով:

*ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Կոմիտեի՝ առողջության և առողջապահական ծառայությունների վերաբերյալ հայտնած մտահոգությունների առումով կատարվել են հետևյալ միջոցառումները.

*Քաղաքային և գյուղական բնակավայրերին առողջապահական ծառայությունների անհամաչափ հասանելիության խնդրի ուղղությամբ*. վերջին տարիներին հանրապետության 9 մարզային բուժհաստատություն վերանորոգվել է, ստեղծվել են ժամանակակից սարքավորումներով հագեցած խառը (մեծերի և մանկական) վերակենդանացման բաժանմունքներ, ստեղծվել և հագեցվել է միջմարզային նշանակության մանկական վերակենդանացման 3 բաժանմունք, տրամադրվել են նորածինների խնամքի և անհետաձգելի բուժօգնության սարքավորումներ: Ի հավելում՝ 2016 թվականին կառուցված՝ Սյունիքի մարզի Մեղրու ԲԿ-ի թերապևտիկ բաժանմունքում ներառվել է 10 մանկական մահճակալ: Կենտրոնի վերակենդանացման բաժանմունքը հագեցվել է երեխաների ինտենսիվ բուժօգնության համար նախատեսված սարքավորումներով: Վերոնշյալ ԲԿ-ի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքներում գործում է նորածինների ինտենսիվ թերապիայի ծառայությունը՝ հագեցած ժամանակակից սարքավորումներով, մասնավորապես՝ նորածինների ինտենսիվ թերապիայի համար նախատեսված սեղան՝ տաքացուցիչով, նորածինների թոքերի արհեստական օդափոխության սարք, հետազոտման լամպ, ինֆուզոմատներ և այլն[92]:

- ԵՊԲՀ-ի «Մուրացան» բժշկական համալիրում գործող նորածնային անհետաձգելի բուժօգնության ծառայությունը համալրվել է 2 ռեանիմոբիլով, իսկ համալիրի նորածնային վերակենդանացման մասնագետների ներգրավմամբ ներդրվել է շուրջօրյա 24/7 խորհրդատվության համակարգ բոլոր հիվանդանոցների համար: Հանրապետության 35 բուժհաստատություն ապահովվել է անվճար հեռախոսային և ինտերնետային կապով՝ «Մուրացան» հիվանդանոցային համալիրում հիմնված 24/7-ի մասնագետներից խորհրդատվություն ստանալու համար:

- Հանրապետության ծննդատներում պտղի սրտի կրիտիկական բնածին արատների վաղ հայտնաբերման սկրինինգի ներդրման նպատակով նորածինների խնամք և բուժօգնություն իրականացնող հանրապետության բոլոր բաժանմունքներին տրամադրվել են պուլս-օքսիմետրեր:

- Մարզերից մայրաքաղաք տեղափոխելու, մարզային բուժաշխատողների նկատմամբ վստահությունը բարձրացնելու, ռիսկային հղիությունները վաղ շրջանում ախտորոշելու նպատակով սարքավորումների ձեռքբերման նպատակով բավարար ու լայնածավալ միջոցառումներ չեն իրականացվել:

- Առողջապահության առաջնային պահպանման ծառայությունները հասանելի և մատչելի են ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերի համար, իսկ

[92] Սույն հետազոտության շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն:

նեղ մասնագիտական բժշկական ծառայություններ ստանալու համար, գործում է ուղեգրման համակարգը:

- Պետական պատվերի շրջանակում երեխաներին տրամադրվող դեղորայքային փաթեթն ընդլայնվել է, որը նպաստել է առողջացման ցուցանիշների և կյանքի որակի բարելավմանը[93]:

- Մանկաբույժների՝ դեպի գյուղեր պարբերական այցերի համար առանձին ֆինանսական միջոցներ հատկացված չեն, քանի որ դա կազմակերպում է պետական պատվերի շրջանակներում հատկացված ֆինանսական միջոցների հաշվին:

- Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող և Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում 2022-2023 թթ. նախատեսվում է անհրաժեշտ բժշկական սարքերով հագեցնել Մարտունու ԲԿ-ն և Վայոց ձորի մարզային հիվանդանոցը[94]:

- ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից ձեռք են բերվել և Երևանի ու մարզերի ծննդօգնության հինգ հաստատությունների հատկացվել (ընթացքի մեջ է) նորածնային ինտենսիվ խնամքի համար անհրաժեշտ հիմնական սարքավորումներ: Հարկ է փաստել, որ «Մուրացան» համալսարանական կլինիկայի նորածնային բաժանմունքին, որը ծանր ախտաբանություններ ունեցող նորածինների ուղեգրման կենտրոն է, ինչպես նաև «Մոր և մանկան ԳՀԻ»-ին հատկացվել են մարմնի սառեցում ապահովող նորարարական սարքավորումներ, որոնք թույլ են տալիս առավել բարենպաստ ելքեր ապահովել ուղեղի ախտահարումներ ունեցող և շատ ցածր քաշով ծնված երեխաների համար:

- Շտապ բժշկական օգնության համակարգի պատրաստվածությունը, արագ արձագանքումը, հասանելիությունը և բժշկական օգնության ծառայությունների որակը բարելավելու նպատակով, 2019 թվականին ավելացել է շտապ բժշկական օգնության ծառայության ծրագրի ֆինանսավորումը, որի շնորհիվ մարզային 14 բժշկական կենտրոններում ավելացել է շտապ բժշկական օգնության բրիգադների թիվը: Ինչ վերաբերում է շտապ բժշկական օգնության կայանների «տեղեկայվածությանը», ապա հարկ է նեշլ, որ ՀՀ մարզերի բոլոր բժշկական կենտրոնները ցուցաբերում են շտապ բժշկական օգնություն և սպասարկում, և շտապ բժշկական օգնության ծառայությունը գործում է բժշկական կենտրոնների կազմում, բացառությամբ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի:

[93] Microsoft Word - e2910f25380af18b6dbd62139c1b4c9f8e59c094f3164743882cb16d4661f6a6 (parliament.am)
[94] Համաձայն ՀՀ առողջապահության նախարարությունից սույն հետազոտության շրջանակներում ստացված տեղեկատվության:

***Նեոնատալ և պերինատալ մահացության բարձր ցուցանիշների նվազեցման ուղղությամբ իրականացված միջոցառումները***

- ՀՀ առողջապահության նախարարությունը նախատեսում է մշակել նեոնատոլոգների մասնագիտական որակավորման բնութագրեր՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

- Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքի Վ.Ի. Կուլակովի անվան մանկաբարձության, գինեկոլոգիայի, պերինատոլոգիայի գիտական կենտրոնի կողմից ամեն տարի անցկացվում է երկշաբաթյա դասընթաց, որին մասնակցում են Երևանի և մարզային բժշկական հաստատությունների նեոնատոլոգները:

- Բուժքույրերի նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմները, ինչպես նաև բուժքույրերի՝ միջազգային չափանիշներին համապատասխանող մասնագիտական որակավորման չափորոշիչների ներդրման հարցերը նախատեսված են առողջապահության նախարարի 2022 թ. փետրվարի 4-ի N 470-Լ հրամանով հաստատված՝ Բուժքույրական գործի զարգացման ռազմավարությունից բխող 2022-2026 թթ. միջոցառումների ծրագրով:

- ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 30 արձանագրային որոշմամբ ընդունված՝ Երեխայի իրավունքների պաշտպանության 2017- 2021 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսված են նորածնային մահացության ցուցանիշի կրճատում նվազագույնը 15 %-ով, բնածին արատներով ծնված երեխաների տեսակարար կշռի նվազում 15 %-ով, նորածինների ընդհանուր թվաքանակում՝ 15 %-ով, մանկական մահացության ցուցանիշի նվազում 20 %-ով, մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշի նվազում 20 %-ով, մինչև 1 տարեկան երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշի նվազում 10 %-ով, մինչև 14 տարեկան երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշի նվազում 20 %-ով:

2021 թվականին մանկական մահացության (մինչև 1 տարեկան) ցուցանիշը 2020 թվականի համեմատ նվազել է 8,1 %-ով և կազմել 6,8 ‰, մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը նվազել է 2,5 %-ով և կազմել 8,0 ‰[95]:

Անկախ ռազմավարական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումից՝ նեոնատալ մահացության ցուցանիշը շարունակում է բարձր մնալ՝ կազմելով մանկական մահացության շուրջ 70 %-ը: Անհրաժեշտ են մասնագետների պարբերաբար վերապատրաստումներ, նեոնատոլոգների և բուժքույրերի որակավորման բարձրացմանն ուղղված դասընթացներ և նյութական և ոչ նյութական խրախուսման միջոցներ[96]:

---

[95] ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2021 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի համաձայն. Microsoft Word - e2910f25380af18b6dbd62139c1b4c9f8e59c094f3164743882cb16d4661f6a6 (parliament.am)

[96] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույց, Երևան, 2018. 0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf (ombuds.am)

- Ոչ պաշտոնական վճարումների նվազեցմանն ուղղված միջոցառումներն են. որպես ծննդօգնության պետական հավաստագրի տրամաբանական շարունակություն՝ Հայաստանում ներդրվել է երեխայի առողջության պետական հավաստագրի համակարգը: Տրվող բուժօգնության դիմաց գումար գանձելու կամ պահանջելու դեպքերը կանխելու նպատակով 0-7 տարեկան բոլոր երեխաներին տրվում է երեխայի առողջության պետական հավաստագիր, որի դարձերեսին զետեղված է տեղեկատվություն՝ անվճար հիվանդանոցային բուժօգնության ծավալների վերաբերյալ, իսկ անմիջական կապ պահպանելու և հարցերին օպերատիվ լուծում տալու նպատակով նշված են ՀՀ առողջապահության նախարարության շուրջօրյա «թեժ գծի» և մոր ու մանկան առողջության պահպանման վարչության հեռախոսահամարները: Ծրագրի ներդրման ընթացքը մշտադիտարկվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակիցների պարբերական այցելությունների և դուրս գրված հիվանդներին կատարվող հեռախոսազանգերի միջոցով, ինչպես նաև թեժ գծին ուղղված բողոքների և տեղեկատվական հարցերի ուսումնասիրման միջոցով: Այնուամենայնիվ, ներդրված չէ վճարման դեպքերի վերաբերյալ անանուն հաղորդում ներկայացնելու գործուն համակարգ:

ՀՀ առողջապահության նախարարի 18.01.2022 թ. թիվ 189-Ա հրամանի համաձայն՝ Քաղաքացիների դիմումների և բողոքների արագ արձագանքման բաժինն իրականացնում է պացիենտի գոհունակության գնահատման մշտադիտարկում, որի նպատակն է գնահատել մատուցված բժշկական ծառայություններից պացիենտի գոհունակությունը, խնդիր առաջանալու դեպքում նպաստել դրանց լուծմանը և կատարել պարզաբանումներ՝ ինչպես պացիենտի, այնպես էլ բուժաշխատողների համար:

### *Կանանց և երեխաների շրջանում թերսնուցման խնդիրները*

- ԿԳՄՍ նախարարության կողմից «Առողջ ապրելակերպ» դասընթացի փորձնական չափորոշչի և ծրագրի շրջանակում մշակվել են առողջ սնուցմանը վերաբերող դասընթացի ուսումնական նյութեր:
- «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի կողմից իրականացվում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը[97]: Տարեցտարի ընդլայնվում է ՀՀ պետական բյուջեից հանրակրթական դպրոցների, նախակրթարանների և տարրական դասարանների սովորողներին դպրոցական սննդով ապահովման ծրագիրը: Ներկայումս հանրապետության 8՝ Արարատի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում իրականացվում

[97] «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիր: Ծրագրի նպատակներն են՝ ուսումնական հաստատություններում սովորողներին առողջ, բազմազան, հավասարակշռված սննդի տրամադրման արդյունավետությունն ապահովելը, աստիճանաբար ընդլայնելով հանրակրթական դպրոցներում սննդի կազմակերպման շրջանակները, ՀՀ ողջ տարածքում տարրական դասարանների բոլոր սովորողներին հավասարակշռված, անվտանգ և որակյալ սնունդով ապահովմանն աջակցելը, ուսումնական հաստատություններում առողջ սննդի կազմակերպմանը, առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորմանը նպաստելը, տեղական արտադրությունը խթանելը, համայնքը, գործարար շրջանակները, սփյուռքի կազմակերպությունները և այլ դոնորներ դպրոցական սննդի կազմակերպման և զարգացման գործում ներգրավելը: Տե՛ս https://escs.am/am/news/8812

է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը: Մինչև 2023 թվականի ավարտը ծրագիրը կներդրվի նաև Արմավիրի և Կոտայքի մարզերում: Այս ընթացքում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը կշարունակի օժանդակել ծրագրին, այդ թվում՝ անցումային, մարզերում դպրոցներում ճաշարանների և խոհանոցների վերանորոգման ու կահավորման ուղղությամբ: 2023 թվականին ծրագրի շահառուների թիվը կլինի 110 000-ից ավելի:

***Կենսամակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականությունը***

Հայաստանում յուրաքանչյուր չորս երեխայից մեկը ապրում է բազմաչափ աղքատության մեջ[98]: Բազմաչափ աղքատների 24.9 տոկոսը երեխաներ են:

Բնակչության որոշ խմբեր, ինչպիսիք են երեխաները (հատկապես 0-5 և 15-17 տարեկան), երեք կամ ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսությունները և կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, հատկապես խոցելի են աղքատության նկատմամբ:

Աղքատությունը և հաշմանդամությունը երկու հիմնական ամենատարածված գործոններն են, որոնք հանգեցնում են խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների տեղավորմանը: 2018 թվականին շուրջ 2 600 երեխա գտնվել է շուրջօրյա խնամքի և պաշտպանության տարբեր հաստատություններում: Մանկատներում և խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում ապրող՝ հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը եղել է 547: Թեև շուրջօրյա խնամքի և պաշտպանության տարբեր հաստատություններում գտնվող երեխաների թիվն անշեղորեն նվազել է, սակայն տարբեր խմբերի միջև նվազումն անհավասարաչափ է եղել, հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում[99]:

2022 թ. հունվարի 1-ից հետո ծնված՝ կարգաթվով երրորդ և հաջորդ երեխաների դեպքում տրամադրվում է ամսական 50 000 դրամ աջակցություն՝ մինչև երեխայի 6 տարեկան դառնալը: Ընտանիքը ստանում է 50 000 դրամ, եթե ունի երկու երեխա:

2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը կավելացվի՝ 28 հազար 6 հարյուրից մինչև 30 հազար 7 հարյուր դրամ՝ անկախ քաղաքային և գյուղական բնակավայրից և աշխատող կամ չաշխատող լինելու հանգամանքից: Իսկ գյուղական բնակավայրերում աշխատողներին վճարվելու է կրկնակի չափով նպաստ:

Բացի նշված միջոցառումներից՝ անցկացվում են նաև նմանատիպ այլ միջոցառումներ. ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան երեխաների համար պետական ֆինանսավորմամբ կազմակերպվել է ամառային հանգիստ՝ երկու հերթափոխով, 20-ական օրով: Ծրագրի բյուջեն կազմել է շուրջ 337 մլն դրամ[100]:

**Կոմիտեի** այս առաջարկությունը մասամբ է կատարվել:

---

[98] Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2018 թթ., տե՛ս poverty_2019_a_2.pdf (armstat.am) https://armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf

[99] Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի խորքային ախտորոշում. 2019-2020 թթ., UNICEF. Սոցիալական https://www.unicef.org/armenia/media/9301/file/%D5%8D%D5%B8

[100] Microsoft Word - e2910f25380af18b6dbd62139c1b4c9f8e59c094f3164743882cb16d4661f6a6 (parliament.am)

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.

- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակում և ընդունում:

- Իրականացնել ծրագրեր՝ ուղղված համայնքահեն բազմոլորտային (առողջապահական, կրթական և սոցիալական) ծառայությունների ստեղծմանն ու զարգացմանը, հատկապես մարզերում բնակվող՝ հաշմանդամություն կամ զարգացման հապաղում ունեցող երեխաների համար, ինչը կնպաստի երեխաների կենսաբանական ընտանիքում մնալուն:

- Ներդրնել վճարման դեպքերի վերաբերյալ անանուն հաղորդում ներկայացնելու գործուն համակարգ և զուգահեռ իրականացնել հանրային իրազեկման ծրագրեր, որպեսզի հանրությունը տեղեկանա անվճար բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունների մասին:

- Մեկնարկել նեոնատոլոգների մասնագիտական որակավորման բնութագրերի մշակումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

- Համընդհանուր ներառականության անցման գործընթացում շարունակաբար մասնագիտորեն վերապատրաստել ուսուցիչներին:

- Ուսումնական հաստատությունների շենքերը և ուսումնական ծրագրերը մատչելի դարձնել հաշմանդամություն ունեցող երեխաների համար ամբողջ հանրապետությունում:

- Ապահովել նախադպրոցական կրթության ոլորտում ներառական կրթությունը՝ շարունակաբար վերապատրաստելով դաստիարակներին: Ապահովել, որպեսզի նախադպրոցական հաստատությունների դաստիարակների համապատասխան քանակը տիրապետի բրայլյան այբուբենին և նշանների լեզվին:

- Շարունակաբար ավելացնել շտապ օգնության բրիգադների թիվը՝ հաշվի առնելով բնակչության խտության հանգամանքը:

- Անկախ նպաստների տրամադրման համակարգի որոշակի փոփոխությունից՝ անհրաժեշտ է բոլոր խոցելի ընտանիքներին ընդգրկել այդ համակարգի մեջ և երաշխավորել բոլոր երեխաների համարժեք կենսամակարդակի իրավունքը:

## ՄԱՍ 7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՄԱՆՑԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավման, կրթության որակի և արհեստավարժ ուսուցիչների պահանջարկի, հիմնական կրթությունից հետո դպրոցներից դուրս մնացողների տոկոսային ցուցանիշի, երեխաների կրոնական ազատության տեսանկյունից դպրոցների ուսումնական ծրագրի վերանայման վերաբերյալ Կոմիտեի հայտնած մտահոգությունների առնչությամբ կատարվել են հետևյալ միջոցառումները.

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 797-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական

հանրակրթական 113 դպրոցի սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը», որի շրջանակներում մինչև 2030 թվականը պետք է ամրացվի կամ նոր կառուցվի 377 դպրոց: Ծրագրի իրականացման համար ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1426-Ն որոշմամբ հաստատվել են «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրից» բխող 2015-2020 թվականների միջոցառումների ծրագիրը, որի 1.1 կետի համաձայն՝ պետք է հաստատվի ուժեղացվող և նոր կառուցվող դպրոցների 46 գերակա շենքերի ցանկը:

- ՀՀ ԿԳՄՍ նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կողմից գործարկվել է «www.emis.am» կայքը, որում յուրաքանչյուր դպրոց ունի անձնագիր: Այն հնարավորություն է տալիս ամբողջական տեղեկություն ստանալ հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների մասին, իսկ նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների վերաբերյալ տեղեկություններ չեն հրապարակվում:

- Հանրակրթության և նախադպրոցական կրթության որակի ապահովմանն ուղղված՝ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ է շարադրվել հանրակրթության պետական չափորոշիչը[101], որը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ, ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:

- 2021-2022 ռուսումնական տարում չափորոշիչը փորձարկվում է ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում, որի նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի ապրիլ-մայիս ամիսների համապատասխան հրամաններով հաստատվել են բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, մաթեմատիկական (ԲՏՃՄ) և մյուս առարկայական փորձնական չափորոշիչները և ծրագրերը[102], որոնք փորձարկումից հետո կլրամշակվեն և մինչև 2026 թվականը փուլ առ փուլ կներդրվեն ՀՀ բոլոր հանրակրթական դպրոցներում: Չափորոշչի լիարժեք փորձարկումն ապահովելու նպատակով ՀՀ Տավուշի մարզի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունները զինվել են բնագիտական առարկաների դասավանդման համար անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներով:

---

[101] Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի թիվ 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, 4 փետրվարի 2021 թվականի թիվ 136-Ն ՀՀ կառավարության որոշում.
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149788

[102] Տե՛ս https://escs.am/am/news/8621

- Կրթության որակի բարելավմանն են միտված նաև ներկայումս իրականացվող լայնածավալ ծրագրերը, որոնք ուղղված են նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կառուցմանը, վերանորոգմանն ու հիմնանորոգմանը, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստմանն ու ատեստավորմանը: Կամավոր ատեստավորման համակարգի ներդրմամբ ակնկալվում է բացահայտել և խրախուսել արդի պահանջներին համապատասխանող ուսուցիչներին, նրանց վարձատրությունն աստիճանաբար մոտեցնել երկրի միջին աշխատավարձին[103], ապահովել նոր, արդի պահանջներին համապատասխան ուսուցիչների մուտքը դպրոց՝ առաջարկելով նրանց մրցակցային աշխատավարձ:

- Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման հետ կապված իրավահարաբերությունները սահմանված են ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 2-ի N 1262-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 396-Ն հրամանով:

- Ներկայումս հանրակրթության ոլորտը գտնվում է բազմաբովանդակ բարեփոխումների փուլում, որոնք բխում են «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքից (ՀՕ-35-Ն, ընդունված 09.02.2022 թ.) և միտված են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության որակի բարձրացմանը, ուսուցիչների մասնագիտական կատարելագործման շարունակականության ապահովմանը, ուսուցիչների ատեստավորման, խրախուսման և մասնագիտական զարգացման նոր գործիքների ներդրմանը, համակարգում ստեղծարար և նորարար ուսուցչական գործունեության խթանմանը, երիտասարդների ներգրավմանը, ուսումնական հաստատությունների կառավարման մեխանիզմների կատարելագործմանը:

- 2021 թվականին առաջին անգամ իրականացվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների կամավոր ատեստավորումը, որին մասնակցել է 996 ուսուցիչ՝ դիմած ուսուցիչների 72,6 %-ը: Կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչների 47,2 %-ը՝ 478 ուսուցիչ, ըստ առարկայական գիտելիքների իմացության աստիճանի գնահատման արդյունքում ստացած միավորների, ստանում է 30-50 տոկոս հավելավճար: ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-

[103] Նախատեսվում է հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցում տրամադրել, որի համար մշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է հատուկ կարգ: 2022 թվականի ընթացքում այդ կարգով նախատեսված փոխհատուցումներ կստանան նաև ուսուցչի օգնականները և հատուկ մանկավարժները: Տեղեկությունը ՀՀ ԿԳՄՍ-ից ստացվել է սույն հետազոտության շրջանակներում:

Ն որոշմամբ հաստատվել է «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը»:

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում սահմանվել է «մասնագիտական չափանիշ» եզրույթը, որն ուսուցչի մասնագիտական զարգացման և գիտելիքների, աշխատանքային գործունեության, կարողությունների, պատասխանատվության նկարագիրն է և հիմք է հանդիսանալու ներկայումս մշակման փուլում գտնվող ուսուցչի տարակարգի շնորհման կարգի համար: Տարակարգ ստացած ուսուցչին տրվում է համապատասխան հավելավճար ուսումնական հաստատությանը հատկացված միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

- Պարտադիր կրթությունից դուրս մնացած դպրոցահասակ երեխաների բացահայտման և ուղղորդման (կրթության մեջ ներառման) հետ կապված իրավահարաբերությունները սահմանված են ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի՝ **«**Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը սահմանելու մասին**»** N 154-Ն որոշմամբ[104]:
- Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբի՝ սեպտեմբերի 1-ի դրությամբ դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում դասարանների կազմավորման ավարտից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (ԿՏԱԿ), համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և դպրոցների կառավարման համակարգի տվյալները և «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման» տվյալները, էլեկտրոնային համակարգում ներկայացնում է 6–18 տարեկան այն երեխաների տվյալները, որոնք որևէ հաստատությունում հաշվառված չեն: Բացահայտված երեխաների ցուցակները, ինչպես նաև էլեկտրոնային միասնական տեղեկատվական բազան հասանելի են «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում՝ https://reports.emis.am/#/schools-static-reports/am-ուս: Համակարգ մուտք գործելու համար ԿՏԱԿ-ը հաշիվներ է տրամադրում հետևյալ շահագրգիռ և պատասխանատու կառույցներին՝

  1) ՀՀ կառավարությանը՝ ի դեմս Կրթության տեսչական մարմնի.
  2) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը.
  3) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.
  4) տարածքային կառավարման մարմիններին.
  5) տեղական ինքնակառավարման մարմիններին.
  6) ՀՀ առողջապահության նախարարությանը.
  7) ՀՀ ոստիկանությանը.
  8) խնամակալության և հոգաբարձության մարմնին.

[104] Տե՛ս ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի՝ «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը սահմանելու մասին» N 154-Ն որոշումը. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149923

9) հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններին.
10) սոցիալական դեպք վարողներին:

2021-2022 ուսումնական տարվա տվյալներով՝ ՀՀ բոլոր մարզերում և Երևանում պարտադիր կրթությունից դուրս է մնացել 6-18 տարեկան և բարձր տարիքի 261 երեխա, որից 117-ը՝ աղջիկ:

- ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին 2021 թվականի 136-Ն ՀՀ կառավարության որոշման՝ հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության վեցերորդ բաժնի համաձայն՝ հանրակրթական ծրագրերի բովանդակության մեջ ներկայացված է հանրագիտության ուսումնական բնագավառը, որը ներառում է հայոց եկեղեցու և նրա դավանանքի ճանաչումն ու արժևորումը[105]:

- Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում համընդհանուր ներառականության քաղաքականության շրջանակում իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնց վերաբերյալ կատարվել է հանրային լայն իրազեկում[106]:

- Հաշմանդամների միջազգային օրվա շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ «Նարեկացի» արվեստի միությունում կազմակերպվել է «ՄԻԱՍԻՆ» ներառական մանկապատանեկան հանրապետական ցուցահանդեսը[107]:

- Անցկացվել է «Կողք կողքի» հանրապետական ներառական երաժշտական-արտ փառատոն[108]:

- ՀՀ ԿԳՄՍ պատվերով թողարկվել է տեսահոլովակ՝ նվիրված համընդհանուր ներառական կրթության ներդրմանը[109]:

**Կոմիտեի** այս առաջարկությունը մասամբ է կատարվել:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.** Փոխել կրթության վերաբերյալ օրենսդրությունը և նախադպրոցական ու հանրակրթական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված շարունակական աշխատանքներ կատարել:

---

[105] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի թիվ 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին 4 փետրվարի 2021 թվականի թիվ 136-Ն ՀՀ կառավարության որոշում https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

[106] https://bit.ly/3HhIOyT https://escs.am/am/news/10876https://escs.am/am/news/7983

[107] Տե՛ս Ստեղծագործելով «ՄԻԱՍԻՆ». ներառական մանկապատանեկան հանրապետական ցուցահանդես. https://escs.am/am/news/10858

[108] Տե՛ս Կողք կողքի՝ հավասար պայմաններով. կայացել է ներառական երաժշտական-արտ փառատոնը, Երևան, 2021. https://escs.am/am/news/10153

[109] Տե՛ս «Ինչպես բոլորը» տեսահոլովակ. https://www.facebook.com/minESCSarm/videos/3398578653590424

## ՄԱՍ 8. ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Չուղեկցվող, ապաստան հայցող և փախստական երեխաների վերաբերյալ Կոմիտեի հայտնած առաջարկությունները հիմնականում վերաբերում են.

ա) ոլորտի օրենսդրության փոխխություններին.

բ) փախստական և ապաստան հայցող երեխաների համար կրթության հասանելիության ապահովմանը.

գ) անչափահասների գործերով արդարադատության իրականացմանը:

ա) 2016 թ. հունվարին ուժի մեջ է մտել «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին՝ Ազգային ժողովի կողմից հաստատված օրենսդրական փոփոխության փաթեթը, որով ամրագրվել են էապես նոր (կոնվենցիոն) մոտեցումներ առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անձանց վերաբերյալ: Նախնառաջ, օրենքը սահմանեց «հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողներ և փախստականներ» հասկացությունը (8-րդ հոդվածի 1-ին մաս), որում ներառված են ապաստան հայցող երեխաները կամ հաշմանդամություն ունեցող անձինք, կամ հղի կանայք կամ միայնակ ծնողներ, ովքեր ունեն անչափահաս երեխաներ: Այնուհետև օրենքը հստակորեն և մանրամասնորեն սահմանեց «առանց ուղեկցողի երեխա» և «ընտանիքից անջատված երեխա» հասկացությունները, որոնք բովանդակությամբ մոտ են Կոմիտեի թիվ 6 ԸՄ-ով առաջարկված ձևակերպումերին, որից էլ կարելի է եզրակացնել, որ նախագծի հեղինակներն օգտվել են այս կարևոր փաստաթղթից: Օրենքը իրավասու պետական մարմիններին պարտավորեցնում է նշված երկու խմբերին աջակցություն ցուցաբերել իրենց իրավասության շրջանակներում՝ առավելագույնս ելնելով նրանց շահերից, իսկ լիազորված մարմինը պարտավորեցնում է աջակցել տեղավորման և խնամքի հարցերում՝ հաշվի առնելով ոչ միայն տարիքը, սեռը և այլ հատկանիշներ, այլ նաև «երեխայի շահերից բխող այլ հանգամանքներ» և ՀՀ օրենսդրությամբ երեխայի համար սահմանված բոլոր իրավունքները: Օրենքը նաև պարտավորեցնում է առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաներին տեղավորել ժամանակավոր տեղավորման կենտրոնում առաջնահերթության կարգով՝ հաշվի առնելով նրանց լավագույն շահերը և խորհրդակցելով նրանց ներկայացուցչի հետ (հոդված 24), իսկ խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմի կամ Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից միջնորդությունը ստանալուց հետո, կատարել յոթ աշխատանքային օրվա ընթացքում: Առանձնապես ընդյայնվել են այս երկու խմբերի երաշխիքները օրենքի 50-րդ հոդվածով: Մասնավորապես, իրավասու մարմինները պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում բացահայտել առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաներին՝ որպես հատուկ կարիք ունեցող խմբերի, ապաստանի վարույթի շրջանակներում նշանակել ներկայացուցիչ, որը պարտավոր է պատշաճ կերպով ներկայացնել նման երեխաների լավագույն շահերը, վարույթի ամբողջ ընթացքում ապահովել, որ բոլոր գործողությունները կատարվեն ներկայացուցչի մասնակցությամբ: Որպես կամայականության դեմ ընդհանուր երաշխիք՝ սահմանված է, որ առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների պաշտպանության տրամադրման գործընթացում

ընդգրկված բոլոր պաշտոնատար անձինք իրենց գործողություններում պետք է ելնեն երեխայի շահերի պաշտպանության սկզբունքից[110]:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2017թ-ի 03. 09-ի N239-Ն որոշմամբ սահմանվում են առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխա ապաստան հայցողի համար ապաստանի ընթացակարգի շրջանակներում ներկայացուցիչ նշանակելու կարգն ու պայմանները: Նշված կարգը տարածվում է 18 տարին չլրացած անձանց վրա:

բ) Օպերատիվ կարգով աջակցություն է ցուցաբերվել պատերազմական իրավիճակում երկրից արտագաղթած սիրիահայերին: Մասնավորապես, դպրոցի վկայականն ունենալու և այն կորցրած լինելու դեպքում սիրիահայերին հնարավորություն է տրվել ավագ դպրոցի քննություններն հանձնել էքստեռն կարգով և ստանալ հայաստանյան վկայական, մինչև 2018 թ. օտարերկրյա քաղաքացիների համար սահմանված ուսման վարձավճարները սիրիահայերի դեպքում հավասարեցվել են ՀՀ քաղաքացիների համար սահմանված վարձավճարներին, դպրոցահասակ երեխաների ինտեգրման խնդիրների լուծումը դրված է դպրոցի ղեկավարության և ուսուցչական անձնակազմի վրա: Դպրոցներն իրականացնում են անհատական լրացուցիչ պարապմունքներ, մատուցում են անհրաժեշտ մանկավարժահոգեբանական և սոցիալական աջակցության ծառայություններ:

- ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հայոց լեզվի դասընթացներ է կազմակերպել ՀԲԸՄ Հայկական վիրտուալ համալսարանի հետ ստորագրված հուշագրի հիման վրա: Այս դասընթացները նախատեսված են Հայաստան տեղափոխված և հայերենին չտիրապետող շահառուների համար: Համալսարանը ստանձնել է իր հաշվին տարեկան 60 հոգու համար անվճար դասընթացների կազմակերպում: 2019 թվականին հայերենի դասընթաց անցել է 10 փախստական: Այս գործընթացի շարունակականությունն ապահովելու նպատակով 2023-2055 թթ. ՄԺԾԾ հայտով «Հայաստանի միգրանտ ընտանիքների դպրոցականների հայոց լեզվի իմացության բարելավում» միջոցառման համար հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ:

- «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու» կարգի համաձայն՝ իրականացվում է նաև փախստականի կարգավիճակ ունեցող երեխաների հանրակրթական դպրոց ընդունելությունը:

- Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով տեղահանված երեխաները առանց խոչընդոտների ներառվել են իրենց համապատասխան կրթական ծրագրերում: Սովորողներին և նրանց ծնողներին ցուցաբերվել է հոգեբանական առաջին օգնությունը, իսկ սովորողներին ուստարվա ընթացքում տրամադրվում են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝ հանրակրթական դպրոցների և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետների կողմից: 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական դպրոցներում հաշվառվել և

[110] Տե՛ս ՄԻՊ-ի 2018 թ. արտահերթ զեկույցը. https://ombuds.am/images/files/0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf

սովորել է Արցախից տեղահանված 9988 երեխա, որոնց վերաբերյալ այդ ժամանակ այլ տեղեկատվություն չի հավաքվել: Այս երեխաների մեծ մասը 2021 թ. Փետրվար-մայիս ամիսների ընթացքում դուրս են եկել ՀՀ դպրոցներից՝ Արցախ վերադառնալու կամ այլ երկիր տեղափոխվելու հիմնավորմամբ: 2021-2022 թթ. ուսումնական տարում ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում գրանցված է 3772 արցախցի երեխա, որից 39-ն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

*Երեխաների շահագործում, ներառյալ՝ երեխաների աշխատանք*

ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսվում են տարբեր տարիքային խմբերի անչափահաս-աշխատողների աշխատանքի առանձնահատկությունները, մինչև տասնվեց տարեկան աշխատողների ժամանակավոր աշխատանքային պայմանագրային ռեժիմը և այլն:

Վերջերս «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության և «Վորլդ Վիժն Հայաստանի» նախաձեռնությամբ հրապարակվել է լայնածավալ հետազոտություն, որի շրջանակներում նաև ուսումնասիրվել է դպրոցահասակ երեխաների աշխատանքում ներգրավածության հարցը: Ըստ մասնագետների՝ վաղ տարիքում աշխատելը երեխաների կրթության խոչընդոտներից մեկն է: Ըստ զեկույցի հեղինակների՝ այն առավել տարածված է գյուղական վայրերում և հեռավոր բնակավայրերում. Երևանում երեխաները դասերից հաճախ չեն բացակայում: Որոշ շրջաններում ձմռանը եղանակային պայմանների պատճառով ճանապարհներն անանցանելի են դառնում: Սա նշվել է նաև որպես դպրոցից բացակայելու պատճառ: Սակայն Հայաստանի որոշ մասերում, ինչպիսիք են Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի մարզերը, որոշ հարցվածներ նշել են, որ ճանաչում են այնպիսի երեխաների, որոնք բացակայել են դպրոցից աշխատանքում ներգրավված լինելու պատճառով: Տասը հարցվածից մեկը փաստել է, որ աշխատանքում ներգրավված լինելու պատճառով չի կարողացել դպրոց հաճախել: Այս առումով ամենամեծ տոկոսները գրանցվել են Գեղարքունիքում՝ 26 տոկոս, Տավուշում՝ 19 տոկոս, և Վայոց ձորի մարզում՝15 տոկոս: Աշխատելու պատճառով դասերից ավելի շատ բացակայում են տղաները, քան աղջիկները: Ինչպես պարզել են զեկույցի հեղինակները, աշխատող երեխաների 40 տոկոսն աշխատում է շինարարական հրապարակներում, որն, ըստ ՀՀ օրենսդրության, համարվում է վտանգավոր աշխատանք[111]:

Վերոհիշյալի առնչությամբ Երեխաների իրավունքների ռազմավարական ծրագրով նախատեսվում է պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման մեխանիզմների մշակում ու ներդրում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի վատթարագույն ձևերում ընդգրկված աշխատող երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմների մշակում և ներդրում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը դեռևս չի իրականացնում մանկական աշխատանքի վերահսկողություն:

ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի՝ «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը սահմանելու մասին» N 154-

[111] Աշխատող դպրոցահասակ երեխաների 40 %-ն աշխատում է շինհրապարակներում: Հոդվածը հասանելի է հետևյալ հղմամբ՝https://www.aravot.am/2018/01/10/930117/

Ն որոշման համաձայն՝ 2021-2022 ուսումնական տարվանից գործարկվել է «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման էլեկտրոնային համակարգը»[112]: 2021-2022 ուսումնական տարվա տվյալներով՝ ՀՀ բոլոր մարզերում և Երևանում պարտադիր կրթությունից դուրս է մնացել 6-18 տարեկան և բարձր տարիքի 261 երեխա, որից 117-ը՝ աղջիկ՝ սոցիալ-տնտեսական վատ պայմանների, ծնողների թույլ չտալու և բազմաթիվ այլ պատճառներով:

Կոմիտեի այս առաջարկությունը մասնակի է կատարվել:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.** Վերանայել աշխատանքային օրենսդրությունը՝ համապատասխանեցնելով Կոմիտեի առաջարկությանն առ այն, որ օրենսդրորեն ամրագրվի երեխայի **«**վատթարագույն ձևեր**»** հասկացությունը, ինչպես նաև սահմանվի **«**հարկադիր աշխատանք**»** հասկացությունը և դա որոշելու չափորոշիչները:

## *ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ*

Կոմիտեի՝ անչափահասների գործերով արդարադատության իրականացման վերաբերյալ հայտնած մտահոգության կապակցությամբ իրականացված միջոցառումներն են.

*Օրենսդրական ակտեր*

- 2021 թ. ընդունվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը[113]: Նշված օրենսգրքի 212-րդ հոդվածով սահմանվում են անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ կատարվող քննչական գործողության առանձնահատկությունները, մասնավորապես այն, որ անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը նեգրավվում է Կառավարության սահմանած կարգով[114] որակավորված հոգեբանը[115]: Քննչական գործողությունների շարքում, հարցաքննության ընդհանուր պայմանների մեջ, ամրագրվել է, որ հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ 4 ժամից ավելի, իսկ անչափահասի հարցաքննությունը՝ 2

[112] Տե՛ս «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման էլեկտրոնային համակարգ»-ի վերաբերյալ տեղեկությունը. հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://reports.emis.am/#/schools-static-reports/am

[113] Տե՛ս Քրեական և Քրեական դատավարության նոր օրենսգրքերի կիրառման ուղեցույցներ: Երևան, ԵԽ Երևանյան գրասենյակի աջակցությամբ: Ուղեցույցները պատրաստվել են Հայաստանի իրավական ոլորտի մասնագետների համար: ԵԽ փորձագիտական աջակցության շնորհիվ մշակվել են ամբողջովին նոր հայեցակարգային լուծումներով Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքեր, որոնք արտացոլում են ինչպես ներպետական քաղաքականության առաջնահերթությունները, այնպես էլ Հայաստանի միջազգային պարտավորությունները: Մեկ տարի առաջ ընդունված երկու օրենսգրքերն ուժի մեջ են մտել 2022 թ. հուլիսի 1-ին: Երկու ուղեցույցների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հետևյալ հղումով՝ https://go.coe.int/PR7Sd

[114] Տե՛ս ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի թիվ 847-Ն որոշում՝ Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողությունների կատարմանը ներգրավվող հոգեբանների որակավորման կարգը սահմանելու մասին. https://www.irtek.am/views/act.aspx?aid=116437

[115] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 212 հոդված, 30.06.2021. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154763

ժամից ավելի: Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 8, իսկ անչափահասի համար՝ 6 ժամը: Այսինքն՝ անչափահասի հարցաքննության տևողությունը տարբերվում է չափահասի հարցաքննության ժամանակից:

Քրեական դատավարության օրենսգիրքը ամրագրում է անչափահասի հետ կապված այլ իրավակարգավորումներ, մասնավորապես.

- անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթը.
- անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննության առանձնահատ-կությունները:

*Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի ընդհանուր պայմանները* կիրառելի են տասնութ տարին չլրացած ձերբակալված կամ մեղադրանքի ներկայացման պահին այն անձանց նկատմամբ, որոնք տարիքը հաստատող փաստաթղթի բացակայության պայմաններում հայտարարում են, կամ ողջամտորեն ենթադրվում է, որ անչափահաս են, քանի դեռ հակառակը չի հաստատվել:

Թեև անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթն իրականացվում է քրեական դատավարության ընդհանուր կարգով, բայց հաշվի են առնվում Քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ գլխի առանձնահատկությունները[116]՝ անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի արագությունը և առանձնացումը, պաշտպանի մասնակցությունն անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթին, օրինական ներկայացուցչի մասնակցությունն անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթին, անչափահասի ձերբակալումը կամ կալանավորումը, անչափահաս մեղադրյալի հարցաքննությունը, անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով քրեական հետապնդումը դադարեցնելը, անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ դատական վարույթի առանձնահատկությունները, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելը, անչափահասի նկատմամբ դատավճիռ կայացնելիս լուծման ենթակա հարցերը:

*Անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննության առանձնահատկությունները*

Անչափահաս տուժողի կամ վկայի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի մասնակցելու տվյալ տուժողի կամ վկայի հարցաքննությանը: Անչափահաս տուժողը կամ վկան հոգեբանի առաջարկությամբ չի հարցաքննվում, եթե դա անհրաժեշտ է նրա իրավաչափ շահերի պաշտպանության համար, և պաշտպանության կողմը մինչդատական վարույթում հնարավորություն է ունեցել հարցեր տալու անչափահասին: Մինչև տասնվեց տարեկան տուժողի կամ վկայի հարցաքննությունն սկսելուց առաջ նախագահողը նրանց բացատրում է վարույթի արդարացի իրականացման համար ճշմարտացի ցուցմունքներ

[116] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154763

տալու նշանակությունը, սակայն չի նախազգուշացնում ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Հարցաքննության ավարտին օրինական ներկայացուցիչն իրավունք ունի նախագահողի թույլտվությամբ հարցեր տալու անչափահաս տուժողին կամ վկային:

2022 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած նոր քրեական օրենսգիրքն էապես ընդլայնում է անչափահասների քրեական պատասխանատվության առանձնահատկությունների վերաբերյալ կարգավորումների շրջանակը՝ ի դեմս 15-18-րդ գլուխների[117]:

2022 թ. ընդունվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց[118]: Ուղեցույցի՝ անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի նպատակների և տեսակների, անչափահասների և 21 տարին չլրացած անձանց նկատմամբ պատիժ նշանակելու, անչափահասներին և 21 տարին չլրացած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու, անչափահասներին և 21 տարին չլրացած անձանց պատժից ազատելու առանձնահատկությունների վերաբերյալ գլուխները ներկայացվել են հին և նոր քրեական օրենսգրքերի համադրության համատեքստում:

Դատավորների, դատախազների, քննիչների վերապատաստման նպատակով մշակվել և հրատարակվել են անչափահասների մասնակցությամբ գործերի քննության վերաբերյալ վերապատրաստման մոդուլներ[119]:

Կոմիտեի հայտնած մտահոգության վերաբերյալ նաև փոփոխություններ են կատարվում «Պրոբացիայի մասին» ՀՀ գործող օրենքում: «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլուխը սահմանում է պրոբացիայի ծառայության գործառույթները հաշտարարության ոլորտում՝ սահմանելով հաշտարարության գործընթացի նախաձեռնման, կազմակերպման, ժամկետների ավարտի, ծախսերի վերաբերյալ դրույթները: Չնայած իրավակարգավորման առկայությանը՝ այն դեռևս լայն տարածում չի ստացել: Թեև 2019-2023 թթ. դատաիրավական բարեփոխումների ծրագրով նախատեսված է գործողություն հաշտարարության վերաբերյալ և

---

[117] Անչափահասների քրեական պատասխանատվությունը և նրանց նկատմամբ նշանակվող պատժի նպատակները, անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակները, անչափահասների նկատմամբ նշանակվող տուգանքը, անչափահասների նկատմամբ նշանակվող հանրային աշխատանքները, անչափահասների նկատմամբ նշանակվող կարճաժամկետ ազատազրկումը, անչափահասների նկատմամբ նշանակվող ազատազրկումը, անչափահասների և 21 տարին չլրացած անձանց նկատմամբ պատիժ նշանակելու սկզբունքները, պատիժ նշանակելը չավարտված հանցագործության համար, պատիժ նշանակելը հանցագործությունների համակցության դեպքում, պատիժ նշանակելը դատավճիռների համակցության դեպքում, քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների բովանդակությունը, քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով, անչափահասների և 21 տարին չլրացած անձանց դատվածությունը, անչափահասներին և 21 տարին չլրացած անձանց պատժից ազատելու առանձնահատկությունները, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը, պատիժը պայմանականորեն չկիրառելը:

[118] Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, 2022. 1680a72c57 (coe.int)

[119] Տե՛ս Անչափահասների մասնակցությամբ գործերով մասնագիտացված քննիչների վերապատրաստման մոդուլներ, Արդարադատության ակադեմիա. https://www.justiceacademy.am/#1

2022 թ. հունիսին ՀՀ արդարադատության նախարարության կողմից[120] վերապատրաստման դասընթացներ են անցկացվել փաստաբանների, դատավորների, հաշտարարների համար՝ ընդգրկելով նաև քրեական արդարադատության հետ կապված թեմաները, բայց առկա է պրակտիկայի ձևավորման և զարգացման անհրաժեշտություն:

*Անչափահասների գործերով արդարադատության իրականացման վերաբերյալ կատարված այլ միջոցառումներ*

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2016 թվականից առ այսօր իրականացնում է Անչափահասների արդարադատության խորհրդի քարտուղարությունը, ինչով էլ պայմանավորված՝ իրականացնում է նիստերի կազմակերպման և խորհրդի գործունեությանն ուղղված ամբողջ աշխատանքները, մշակում և իրականացնում է հետազոտություններ, պատրաստում է մասնագիտական ձեռնարկներ, կազմակերպում է մասնագիտական փորձի փոխանակման հանդիպում-քննարկումներ, արդարադատության մատչելիությանն ու իրազեկմանն ուղղված՝ երեխաների հետ բազմաթիվ միջոցառումներ:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2017 թվականին «Փի Էյչ Ինթերնեշնլ» հասարակական կազմակերպության հայկական մասնաճյուղի աջակցությամբ իրականացված «Աջակցություն ՀՀ-ում նորաստեղծ պրոբացիայի ծառայությունում երեխայանպաստ մոտեցումների և կառուցակարգերի ձևավորմանը» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է «Համագործակցությունը և ծառայությունների մատչելիությունը իրավախախտ երեխաների վերասոցիալականացման գործընթացում» թեմայով խորհրդաժողով: Մշակվել է ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության՝ անչափահաս շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման գործիք և գործիքի կիրառման ուղեցույց: Վերը նշված ծրագրով, ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության հետ համագործակցության շրջանակներում, իրականացվել է նաև անչափահասի ռիսկերի և կարիքների գնահատման մեթոդաբանության կիրառման վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության 45 աշխատակցի վերապատրաստում: Իրականացվել է անչափահասների հետ աշխատանքում կարողությունների զարգացման դասընթաց Երևան քաղաքի պրոբացիայի ծառայության 25 աշխատակցի համար:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2017 թվականին դատավորների և դատախազների համար կազմակերպել է մասնագիտական քննարկում՝ դատավարությանը մասնակից երեխաների (իրավախախտ, տուժող, վկա) իրավունքների պաշտպանության թեմայով՝ կարևորելով դատավարական գործընթացներում միջազգային նորմերի և սկզբունքների պահպանումը: Կարևորվել է, մասնավորապես, հոգեբանական մոտեցումներ դրսևորելու անհրաժեշտությունը: Իրականացվել է «ՀՀ-ում հանցագործություններից տուժած երեխաների հիմնական կարիքները» որակական հետազոտությունը, որի արդյունքները հրատարակվել են:

[120] Վերապատրաստման դասընթացներն անցկացվել են ս.թ. հունիսի 16-22-ը ՀՀ արդարադատության նախարարության և «Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդում» ծրագրի շրջանակներում: Դասընթացներն անցկացրել է Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ)՝ Էքսպերտիզ Ֆրանսի և Լատվիայի դատական իշխանության կառավարման մարմնի հետ:

- Մշակվել է «Երեխաների մասնակցությամբ դատավարության» գործառնական ուղեցույց՝ նախատեսված դատավորների և դատախազների համար:

- Երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման և երեխայակենտրոն մոտեցումների ձևավորման նպատակով իրականացվել են դասընթացներ՝ երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթների առանձնահատկությունների և երեխայի վրա հոգեբանական ազդեցության վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարողների, Երևան քաղաքի Սոցիալական ծառայության տարածքային գրասենյակների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների ներկայացուցիչների մասնակցությամբ:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2018 թվականին, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ, իրականացրել է՝ «Բազմաոլորտային ազգային հարթակի ուժեղացում՝ ուղղված երեխաների հանդեպ բռնությանը վերջ դնելու գործողությունների պլանավորմանը, իրագործմանը և գնահատմանը» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայողների վերապատրաստում, կազմակերպվել է միջազգային որդեգրման և առևանգման գործերով քննարկում, մշակվել է համապատասխան իրավական ակտի նախագիծ: Կազմակերպվել է օտարերկրյա որդեգրման և միջազգային առևանգման գործերով օրենսդրական դաշտի բարելավման վերաբերյալ միջգերատեսչական քննարկում: Իրականացվել են քաղաքացիական գործերով և ընտանեկան օրենսգրքից բխող՝ երեխաների պաշտպանության հարցերով դասընթացներ և մասնագիտական քննարկումներ (պրոբացիայի, հարկադիր կատարման և սոցիալական ծառայության տարածքային գրասենյակների ծառայողներ, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամներ, քննիչներ, ոստիկաններ, դատավորներ, դատախազներ):

- Իրականացվել է արդարադատության ոլորտում հանրային հոգեբանների ինստիտուտի ներդրման հետ կապված ծախսերի գնահատում, մշակվել է երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ ուղեցույց:

- Իրականացվել է երեխաների նկատմամբ բռնության առկայության դեպքում պետական մարմինների գործողությունների վերլուծություն, և ներկայացվել են առաջարկություններ:

- Հաշվի առնելով ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող համակարգումը՝ արդարադատության համակարգի և իրավապահ համակարգի մարմինները (ՀՀ ոստիկանություն, ՀՀ դատական դեպարտամենտ, ՀՀ քննչական կոմիտե) ակտիվորեն ներգրավվել են երեխաների իրավունքների պաշտպանության բարեփոխումներում:

- Իրականացվել են դատավորների, դատախազների, հարկադիր կատարողների և պրոբացիայի ծառայողների, փաստաբանների կարողությունների զարգացման դասընթացներ՝ ուղղված այս կառույցներում երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը միտված մասնագիտական աշխատանքի զարգացմանը:

- Միևնույն ժամանակ, կատարվել են վերլուծություններ, մշակվել են երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող իրավական ակտերի փաթեթներ, քրեական,

քրեական դատավարության, քրեակատարողական օրենսգրքերում (այդ թվում՝ նաև նոր նախագծերում) երեխաների իրավունքներին վերաբերող նոր իրավակարգավորումներ:

- Անչափահասների արդարադատության խորհրդի գործունեության արդյունքում մշակվել են ձեռնարկներ դատավորների և դատախազների համար, պարբերաբար կազմակերպվել են միջգերատեսչական հանդիպումներ առկա խնդիրները լուծելու և համատեղ քննարկելու նպատակով: Հաշվի առնելով Անչափահասների արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետությունը՝ Եվրոպայի Խորհուրդը 2019-ից Հայաստանի Հանրապետությանը ներառել է End Online Child Sexual Exploitation and Abuse @Europe տարածաշրջանային ծրագրում, որի շրջանակում ազգային կոորդինացնող մարմին է նշանակվել ՀՀ արդարադատության նախարարությունը:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ Մեծ Բրիտանիայի կառավարության աջակցությամբ, իրականացնում է «Աջակցություն Հայաստանի կառավարությանը՝ պատշաճ իրականացնելու մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունները» ծրագիրը, որի շրջանակներում իրականացնում է «Ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության հաղորդակցության» ռազմավարության մշակումը և «Ընտանիքում բռնության հետ կապված հիմնախնդիրներով զբաղվող հանրային ծառայողների համար վերապատրաստման» ծրագիրը:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2018 թվականին կազմակերպել է 2 մասնագիտական քննարկում դատավարությանը մասնակից երեխաների (որպես տուժող, վկա կամ իրավախախտ) իրավունքների պաշտպանության թեմայով. քննարկվել են դատավարական գործընթացներում միջազգային նորմերի և սկզբունքների պահպանման, ինչպես նաև հոգեբանական մոտեցումների ու դրանց գործիքակազմի կիրառման հիմնախնդիրները:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2018 թվականին մշակել և հրատարակել է «Երեխաների մասնակցությամբ դատավարություն» գործառնական ուղեցույց՝ դատավորների և դատախազների համար: Իրականացրել է պրոբացիայի ծառայողների վերապատրաստում, անչափահասների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ (մասնակիցների թիվը՝ 35) և հրատարակել է «Պրոբացիայի ծառայությունում անչափահասի հետ աշխատանքը» գործառնական ուղեցույցը:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ն իրականացրել է դասընթացներ երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթների առանձնահատկությունների և երեխայի վրա հոգեբանական ազդեցության վերաբերյալ հարկադիր կատարումն ապահովող ծառայողների, Երևան քաղաքի սոցիալական ծառայության տարածքային գրասենյակների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների ներկայացուցիչների (մասնակիցների թիվը՝ 39) մասնակցությամբ:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2018 թվականին մշակել է բռնության ենթարկված երեխաների վերաբերյալ սոցիալական և առողջապահական ոլորտներում վարչական տվյալների հավաքման ձևաթղթեր և դրանց օրենսդրական կարգավորումներն ապահովող նախագծեր:

Իրականացրել է պրոբացիայի և քրեակատարողական ծառայողների հետ համագործակցության և անչափահասների հետ աշխատանքում առանձնահատկությունների ապահովման նպատակով մասնագիտական գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանն ու զարգացմանն ուղղված հնգօրյա դասընթացներ:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2018 թվականին կազմակերպել է ուսումնասիրություն ՀՀ-ում խնամակալության և հոգաբարձության մարմինների հանձնաժողովների գործունեության վերաբերյալ, որի շուրջ կազմակերպվել է միջմասնագիտական քննարկում:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2019 թվականին իրականացրել է կարողությունների զարգացման երկօրյա հանդիպում՝ ուղղված երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթների իրականացման գործընթացում երեխայի հոգեբանական առանձնահատկությունների, երեխայի հետ աշխատանքի դժվարությունների, երեխայի հետ առնչվող մասնագետների հոգեբանական մասնագիտական հմտությունների ձևավորմանը ԽՀՀ անդամների, Երևան քաղաքի սոցիալական աջակցության տարածքային կենտրոնների աշխատակիցների և հարկադիր կատարումն ապահովող ծառայողների մասնակցությամբ:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2019 թվականին իրականացրել է «Երեխայի նկատմամբ ընտանիքում բռնության դեպքերի զգայուն լուսաբանում» խորագիրը կրող դասընթաց-քննարկում՝ ընտանեկան բռնության դեմ պայքարի և այն կանխելու, ներկա և հետագա նախաձեռնությունների արդյունավետությունը բարձրացնելու և զգայուն լուսաբանելու նպատակով: Դասընթաց-քննարկումը ներառել է երեխաների նկատմամբ բռնության դեպքերի լուսաբանմանը վերաբերող իրավական, հոգեբանական և լրատվական թեմաներ: Դասընթացին մասնակցել են տարբեր ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, անկախ լրագրողներ, ուսանողներ: Անդրադարձ է կատարվել համացանցում երեխաների անվտանգության խնդիրներին վերաբերող թեմաներին և դրանց իրավական լուծումներին, ներկայացվել են երեխաների նկատմամբ ընտանիքում բռնության դեպքերի լուսաբանման միջազգային փորձն ու չափորոշիչները, լուսաբանման գործընթացում կրկնազոհության խնդիրը և, լուսաբանման նպատակով, բռնության ենթարկվածին զգայուն մոտեցում ցուցաբերելու կարևորությանը:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2019 թվականին կազմակերպել է երեխաների իրավունքների պաշտպանության և Ընտանեկան օրենսգրքի բարեփոխումների թեմայով մամուլի ասուլիս՝ «Երեխայի իրավունքի հիմնախնդիրը մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության համատեքստում»: Կազմակերպվել է երեխաների մասնակցությամբ «Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման և արձագանքման գործողությունները» խորագրով քննարկում: Քննարկման ընթացքում երեխաները բարձրաձայնել են խնդրի հետ կապված իրենց պատկերացումները, մշակել և ներկայացրել են առաջարկություններ, թե իրենք ինչ գործողություններ կձեռնարկեին բռնության կանխարգելման և բռնության հետևանքով տուժած երեխաներին օգնելու համար, նաև առաջարկություններ են արել հասարակությունից երեխաների օտարումը թույլ չտալու վերաբերյալ և թե՝ ինչպիսին պետք է լինի պետության արձագանքը: Իրականացվել են «Արդարադատությունը երեխաների աչքերով» թեմայով հանրային քննարկումներ մարզերում՝ ուղղված երեխայի լավագույն շահի պաշտպանությանը արդարադատությանն առնչվելիս: Իրականացվել են դպրոցահասակների

շրջանում նաև ամենատարածված խնդրի՝ բուլլինգի վերաբերյալ քննարկումներ: Իրականացվել է «Պրոբացիայի ծառայության էությունը, խնդիրները, զարգացման հնարավորությունները՝ գերմանական փորձի հիման վրա» երկօրյա աշխատաժողով, որին մասնակցություն ունեցան գերմանացի ու տեղական փորձագետները, ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության մասնագետները, դատախազներ, դատավորներ, փաստաբաններ, Արդարադատության ակադեմիայի աշխատակիցներ: Աշխատաժողովի ընթացքում խոսվել է դատարանների և ՀՀ դատախազության, ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության հետ համագործակցության մասին, հատկապես խոսվել է անչափահասների գործերով վճիռների մասին, որոնց կայացման արդյունքում դատապարտյալն անցնում է պրոբացիայի ծառայության հսկողության ներքո, և կարևոր են նրա վերահսկողության մեխանիզմները ծառայողի կողմից: Կազմակերպությունը 2019 թվականին մշակել և հրատարակել է «Երեխայի նկատմամբ բռնության կանխարգելում և արդյունավետ պաշտպանություն» և «Ընտանիքում բռնության խնդրի իրազեկման և բռնության ենթարկված անձանց աջակցություն» ուղեցույցները:

- Իրականացվել է «Առցանց հարթակներ՝ հնարավորություն, թե՞ վտանգ երեխաների համար» վեբինար երեխաների մասնակցությամբ՝ ուղղված հենց նրանց իրավունքների մասին իրազեկմանը՝ անդրադարձ կատարելով երեխաներին առնչվող վավերացված փաստաթղթերին, մասնավորապես, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային:

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2022 թվականին իրականացրել է Անչափահասների արդարադատության խորհրդի նիստ՝ Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրի գործունեությանը վերաբերող թեմայով: Քննարկման ընթացքում շեշտադրվել է թեմային բազմիցս անդրադառնալու, սակայն մինչ այժմ ի նպաստ երեխայի լուծում չունենալու հանգամանքը: Նշվել է, որ օրենսդրական փոփոխությունները և ոլորտային վերլուծությունների տրամաբանությունը հնարավորություն կտան անցում կատարել համագործակցության և ծառայությունների նոր մոդելների՝ ի նպաստ երեխաների ավելի արդյունավետ վերասոցիալականացմանը հասարակության ներսում:

*Անչափահաս տուժողներ և վկաներ*

Անչափահասների արդարադատության հետ կապված՝ ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրի ակնկալվող արդյունքներից են, ի թիվս այլոց, իրավախախտ, տուժող և վկա երեխաների կարիքների, դրանց ապահովման համար անհրաժեշտ ծառայությունների մատչելիության ուսումնասիրությունը, ուսումնասիրության արդյունքում ստացված ծառայությունների հասանելիության շեմի բարձրացումը առնվազն 20 %-ով:

Վերոհիշյալ ռազմավարական ծրագրով նախատեսվում են.

-Իրավախախտ, տուժող երեխաների կարիքների ուսումնասիրություն, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում և համապատասխան ենթաօրենսդրական ակտերում լրացումների և փոփոխությունների կատարում (օրենսդրական և ընթացակարգային բարեփոխումների միջոցով), տուժող անչափահասների իրավունքների պաշտպանության

օրենսդրական երաշխիքների և դրանց կիրառման ընթացակարգերի մշակում և ապահովում, տուժող անչափահասների վերաբերյալ վիճակագրական ցուցիչների գործարկում (արդարադատության մատչելիության ապահովման իրավական կառուցակարգերի զարգացում քրեադատավարական համակարգում):

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը, Հայաստանում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համագործակցությամբ, 2021 թվականին մշակել է «Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, ինչպես նաև ընտանեկան բռնության գործերով մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը ներգրավվող հոգեբանների վերապատրաստման ուսումնական ծրագիր»: ՀՀ կառավարության կողմից ընդունվել է հոգեբանների թեկնածուների որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին որոշումը[121], որը նախագծել է ՊՈԱԿ-ը:

- Հայաստանում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում մեկնարկել է «Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, ինչպես նաև ընտանեկան բռնության գործերով մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը ներգրավվող հոգեբանների վերապատրաստման» ծրագիրը: Իրականացվել է 25 հոգեբանի վերապատրաստում անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, ինչպես նաև ընտանեկան բռնության գործերով մասնակցությամբ քննչական գործողություններում ներգրավման ուղղությամբ:

*Կոմիտեի՝ ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց կրթության իրավունքի և ազատազրկման վայրի պայմանների բարելավման հետ կապված մտահոգության վերաբերյալ կատարված միջոցառումներն են.*

- ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2018 թվականի մարտի 21-ի թիվ 250-Ա/2 և 251-Ա/2 հրամաններով ստացել է հանրակրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաներ: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի N 1398-Ա/2 հրամանով հաստատվել է ՊՈԱԿ-ի մշակած՝ ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանները (այլընտրանքային/հեղինակային/կրթական ծրագիր): Վերոգրյալի արդյունքում Կազմակերպությունը 2019 թվականի սեպտեմբերի 2-ից առ այսօր իրականացնում է ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված (մինչև 19 տարեկան) անձանց հանրակրթությունը: 2022 թվականի դրությամբ, հանրակրթության ընդհանուր ծրագիրն իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում:
- Անչափահասների կալանավորման և խափանման այլ միջոցների վերաբերյալ հստակ ցուցիչներով միասնական վիճակագրություն վարելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ներկայումս ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից վարվում է միայն

[121] Տե՛ս ՀՀ կառավարության 2022 թ. հունիսի 9-ի թիվ 847-Ն որոշումը «Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողությունների կատարմանը ներգրավվող հոգեբանների որակավորման կարգը» սահմանելու մասին,:

միասնական հաշվառում այն անչափահասների ուղղությամբ, որոնց նկատմամբ ընտրված է կալանավորում խափանման միջոցը:

ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկին առնչվող խնդիրներին անդրադարձել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2018 թվականի իր արտահերթ զեկույցում, որի առնչությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ազատազրկված անչափահաս անձանց խցերում տեղադրված են միահարկ մահճակալներ, խցում առկա է հեռուստացույց, սառնարան.
- ազատազրկված անչափահաս անձինք, բացօթյա զբոսանքից զատ, օգտվում են նաև մարզասենյակից, որը համալրված է հետևյալ մարզագույքով՝ թենիսի սեղան, հեծանիվներ, ձեռքի ուժի համար նախատեսված սեղան, ուժային մարզասարք, վազքուղի, գիմնաստիկայի մատ, ցատկապարաններ.
- անկողնային պարագաները տրամադրվում են համապատասխան քանակությամբ և ժամկետներում.
- խցերի ջերմաստիճանը համապատասխանում է սենյակային ջերմաստիճանի նորմերին, ցուրտ եղանակային պայմաններում ցանկության դեպքում տրամադրվում է լրացուցիչ ծածկոց.
- ՀՀ արդարադատության նախարարությունը 2022 թվականի բյուջետային հայտով նախատեսել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում լայնածավալ շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով տրամադրել համապատասխան ֆինանսական միջոցներ, որն արդեն իսկ հաստատվել է ՀՀ կառավարության կողմից[122]:

Կոմիտեի այս առաջարկությունը մասնակի է կատարվել:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.**

- Կատարել անչափահասների գործերով արդարադատությանն ուղղված օրենսդրական, ինստիտուցիոնալ փոփոխություններ (Պրոբացիայի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ, անչափահասների գործերով դատավորների վերապատրաստման ծրագրերի և առկա ձեռնարկների վերանայում՝ նոր ընդունված քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համատեքստում):

***ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ***

**ա) Երեխաների իրավունքների կոնվենցիայի կամընտիր արձանագրություն.** 2011 թ. դեկտեմբերի 19-ին ստորագրված «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝

[122] Արդեն հայտարարվել է մրցույթ, որի արդյունքներով շուտով կմեկնարկեն շինարարական աշխատանքները:

հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2021 թ. հունիսի 24-ին:

**բ) Միգրանտների ընտանիքների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիա.** ՀՀ կողմից ստորագրվել է (2013 թ.), բայց դեռ չի վավերացվել, քանի որ իրավասու գերատեսչությունը նպատակահարմար չի համարում դրա վավերացումը ներկա ժամանակահատվածում:

## ԱՄՓՈՓՈՒՄ

**Կատարված հետազոտության հիման վրա կարող ենք կատարել ընդհանրական և մասնավոր բնույթի եզրահանգումներ**

*Ընդհանրական բնույթի եզրահանգումներ*

- Եզրափակիչ դիտարկումների մեծ մասը ՀՀ կողմից կատարվել է մասնակի: Ընդ որում՝ մասնակիությունը վերաբերում է այն հարցին, որ տվյալ խնդրի կատարումը պահանջում է ինչպես օրենսդրական, այնպես էլ պրակտիկ միջոցառուների համատեղ իրականացում: Օրենսդրական, վարչական և պրակտիկ միջոցառումների համատեղ կատարումը բնութագրական է ոչ բոլոր միջոցառումներին:

- Արծարծված խնդրի լուծման ուղղությամբ հաջողություն է գրանցվել Կոմիտեի այն մտահոգությունների հետ կապված, որոնց առնչությամբ իրականացված միջոցառումները կատարվել են ամբողջությամբ: Ձեռք բերված արդյունքները պահպանելու համար անհրաժեշտ է շարունակաբար իրականացնել միջոցառումներ, քանի որ ստեղծված բարենպաստ վիճակը միջոցառումների շարունակական չկատարման արդյունքում կարող է կրկին փոխվել:

- Որոշ միջոցառումներ ենթադրում են մշտադիտարկումների իրականացում, կամ վերջիններիս իրականացումը բխում է օրենքի պահանջներից: Անհրաժեշտ է մշտադիտարկումներ անցկացնել և հրապարակայնացնել դրանց արդյունքները:

- Եզրափակիչ դիտարկումների չկատարման պատճառներն ու հիմքերը հիմնականում պայմանավորված են առկա խնդիրների փուլային լուծումների մոտեցման ընտրությամբ, օրենսդրության փոփոխությունների անհրաժեշտությամբ, ֆինանսական միջոցների սակավության հաղթահարմամբ, հանրային իրազեկման շարունակական անհրաժեշտությամբ:

- Եզրափակիչ դիտարկումների բազմակողմ և հետևողական իրականացման համար անհրաժեշտ է միջգերատեսչական համագործակցության վերապլանավորում՝ հիմնված ոլորտային խնդիրների լուծման նպատակով իրականացվող միջոցառումների համակարգման միջազգային փորձի վրա՝ կիրառելով յուրաքանչյուր

իրավունքի իրացման վիճակի գնահատման նպատակով օգտագործվող ստուգման թերթիկները[123]:

*Մասնավոր եզրահանգումներ*

- *Խտրականության արգելքի, երեխայի լավագույն շահի և երեխայի լսված լինելու իրավունքի իրացման* հետ կապված՝ իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ ինչպես պետական մակարդակով, այնպես էլ քաղաքացիական հասարակության կողմից, սակայն բավարար օրենսդրական փոփոխություններ դեռևս չեն կատարվել, ինչպես նաև առկա է դատական պրակտիկայի միասնականացման անհրաժեշտություն:

- Երեխայի նկատմամբ բռնությունը վերացնելու ուղղությամբ կատարված կարևոր քայլերից էր «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, սակայն դեռևս չկա երեխաների դեմ բռնության վաղ հայտնաբերման, կանխարգելման և արձագանքման համապարփակ կառուցակարգ: Թեև կատարվել են վնասակար պրակտիկային ուղղված փոփոխություններ՝ ի դեմս ՀՀ Սահմանադրության և ընտանեկան օրենսգրքի, սակայն եզդի աղջիկների շրջանում դեռևս շարունակվում են վաղ ամուսնությունները:

- Ընտանեկան միջավայրի և այլընտրանքային խնամքի ուղղությամբ իրականացված կարևորագույն ձեռքբերումներից են ինտեգրված սոցիալական ծառայությունների և սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումը և նպաստների համակարգի բարելավումը: Այուամենայնիվ, սոցիալապես անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակությունը դեռևս շատ թույլ հիմքերի վրա է դրված: Կարևոր է որդեգրման ինստիտուտի վերանայման աշխատանքների իրականացումը:

- Հաշմանդամության, տարրական առողջության և բարեկեցության կապակցությամբ դեռևս չեն մշակվել և ընդունվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր, ապահովված չէ հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող առողջապահական ծառայությունների որակը, ներդրված չէ անանուն հաղորդում ներկայացնելու գործուն համակարգը, ներառականության անցման գործընթացում ուսուցիչների մեծամասնությունը վերապատրաստված չէ, ապահովված չէ ուսումնական հաստատությունների շենքերի և ուսումնական ծրագրերի մատչելիությունը:

- Կրթության, ժամանցի և մշակութային միջոցառումների հետ կապված խնդիրները հիմնականում վերաբերում են կրթության ոլորտում օրենսդրական բացերին, ինչպես

[123] Տե՛ս Implementation Handbook for the Convention on the Rights of the Child. UNICEF, 2007. https://www.unicef.org/media/96496/file/Implementation%20Handbook%20for%20the%20Convention%20on%20the%20Rights%20of%20the%20Child.pdf

նաև նախադպրոցական և հանրակրթական հաստատությունների ենթակառուցվածքների բացակայությանը:

- Հատուկ պաշտպանության այլ միջոցների վերաբերյալ խնդիրներն առնչվում են ապաստան հայցող և փախստական երեխաներին, երեխաների հարկադիր աշխատանքին, անչափահասների գործերով արդարադատության իրականացմանը:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Սույն հետազոտության շրջանակներում արձանագրված խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է[124]՝**

ՄԱՍ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵԻ՝ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նախատեսել երեխայի իրավունքների վերաբերյալ ընդունվելիք ռազմավարական ծրագրերի հստակ բյուջետային գնահատում:
- Ապահովել բյուջետային հատկացումների *թափանցիկությունը* կոնկրետ երեխաների իրավունքների սոցիալական և կրթական ոլորտներում:
- Ձևավորել կառուցակարգեր ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կատարման համար տրամադրվող ռեսուրսների համարժեքությունը և դրանց բաշխման արդյունավետությունը և արդարացիությունը մշտադիտարկելու և գնահատելու համար:

ՄԱՍ 2. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ապահովել պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների վերաբերյալ օրենսդրությունից բխող աշխատանքների շարունակական իրականացում, ինչպես նաև հրապարակայնացնել մշտադիտարկումների անցկացման արդյունքները:
- Ընդունել խտրականությունը բացառող օրենք:
- Ընդունել «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Բազմազավակ ընտանիքների մասին», «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքները:

[124] Սույն հետազոտության շրջանակներում արված առաջարկությունները կարող են համընկնել ՄԻՊ-ի կողմից 2018 թվականի արտահերթ հրապարակային զեկույցում կատարված առաջարկությունների հետ, քանի որ այդ առաջարկությունների զգալի հատվածը չի կատարվել:

ՄԱՍ 3. ԵՐԵԽԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Փոփոխություններ կատարել ՀՀ ընտանեկան օրենսգրքում և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքներում:
- Համապատասխանեցնել ռելեվանտ օրենսդրությունը Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի պահանջներին՝ ամրագրելով «երեխայի լավագույն շահ» հասկացությունը և շարունակել միասնականացնել «երեխայի լավագույն շահ» սկզբունքի կիրառման ուղղությամբ դատական պրակտիկան:

ՄԱՍ 4. ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- Շարունակել կրթական ծրագրերի իրականացումը եզդի աղջիկների շրջանում:

ՄԱՍ 5. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

-Մշակել որդեգրման գործընթացի հաստատման կենտրոնացված համակարգին ուղղված օրենսդրություն:

ՄԱՍ 6. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ընդունել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը:

- Շարունակել ապահովել մարզերում բնակվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող առողջապահական ծառայությունների որակը:

- Ներդնել վճարման դեպքերի վերաբերյալ անանուն հաղորդում ներկայացնելու գործուն համակարգ և հընթացս իրականացնել հանրային իրազեկման ծրագրեր, որպեսզի հանրությունը տեղեկանա, թե բժշկական օգնության ու սպասարկման որ ծառայություններն են անվճար:

- Սկսել նեոնատոլոգների մասնագիտական որակավորման բնութագրերի մշակումը միջազգային չափանիշներին համապատասխան:

- Վերապատրաստել ուսուցիչներին համընդհանուր ներառականության անցման գործընթացի համատեքստում:

- Մատչելի դարձնել ուսումնական հաստատությունների շենքերը և ուսումնական ծրագրերը հաշմանդամություն ունեցող երեխաների համար ամբողջ հանրապետությունում:

- Ապահովել նախադպրոցական կրթության ոլորտում ներառական կրթությունը՝ շարունակաբար վերապատրաստելով դաստիարակներին: Ապահովել, որպեսզի նախադպրոցական հաստատությունների դաստիարակները տիրապետեն

բրայլյանայբուբենին և նշանների լեզվին:

- Շարունակաբար ավելացնել շտապ օգնության բրիգադների թիվը՝ հաշվի առնելով բնակչության խտության հանգամանքը:

- Բոլոր խոցելի ընտանիքներին ընդգրկել անկախ նպաստների տրամադրման համակարգի մեջ և երաշխավորել բոլոր երեխաների համարժեք կենսամակարդակի իրավունքը:

ՄԱՍ 7. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կատարել օրենսդրական փոփոխություններ կրթության վերաբերյալ օրենսդրությունում:

- Կատարել նախադպրոցական և հանրակրթության հաստատությունների ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված շարունակական աշխատանքներ:

ՄԱՍ 8. ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վերանայել աշխատանքային օրենսդրությունը՝ համապատասխանեցնելով Կոմիտեի առաջարկություններին առ այն, որ.
    - անհրաժեշտ է ամրագրել «երեխայի վատթարագույն ձևեր» հասկացությունը.
    - սահմանել «հարկադիր աշխատանք» հասկացությունը և ամրագրել դրա կիրառման չափորոշիչները:

- Կատարել անչափահասների գործերով արդարադատությանն ուղղված օրենսդրական, ինստիտուցիոնալ փոփոխություններ (Պրոբացիայի մասին օրենքում փոփոխություններ, անչափահասների գործերով դատավորների վերապատրաստման ծրագրերի վերանայում՝ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համադրության համատեքստում և այլն):

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Վերանայել Միգրանտների ընտանիքների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիայի վավերացման հնարավորությունը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

*Երեխայի կրթության իրավունքի արդյունավետ իրացման վերաբերյալ*

1. Կրթության բնագավառում բյուջետային հատկացումների բարձրացման ուղղությամբ ի՞նչ միջոցառումներ են նախատեսվում: Որքանո՞վ են ավելացել կրթության բնագավառի հատկացումները վերջին հինգ տարիների ընթացքում:

2. Ներառական կրթության մատչելիության ապահովման վերաբերյալ ի՞նչ միջոցառումներ են իրականացվել (օրենսդրական (ենթաօրենսդրական) ակտերի ընդունում, վարչական միջոցներ և հանրային իրազեկման միջոցներ): Ներառականության հետ կապված ի՞նչ մասնագիտական վերապատրաստումներ են անցել ուսուցիչները.

2. Ի՞նչ ծրագրեր են մշակվել նախադպրոցական հաստատություններում ներառական կրթության ապահովման ուղղությամբ:
3. Իրականացվե՞լ են, արդյոք, բռնության ենթարկված երեխաների աջակցության ծրագրեր:
4. Դպրոցներում բռնության դեպքերը նվազեցնելու ուղղությամբ ի՞նչ քայլեր են մշակվել:
5. Իրականացվե՞լ են, արդյոք, ծրագրեր՝ ուղղված իգական սեռի երեխաների առողջության, զարգացման իրավունքների վրա վաղ ամուսնությունների բացասական հետևանքների վերաբերյալ:
6. Կրթության որակի ապահովմանն ուղղված ի՞նչ միջոցառումներ են իրականացվում:
7. Վերանայվե՞լ է, արդյոք, ուսուցիչների աշխատանքի ընդունման կարգը:
8. Գործարկվե՞լ են, արդյոք, ուսուցիչների նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմները:
9. Օրենսդրորեն ամրագրվե՞լ են, արդյոք, «կրթությունից դուրս մնացած» երեխաների կարգավիճակի գնահատման չափանիշները: Վարվու՞մ է, արդյոք, այդպիսի երեխաների վիճակագրություն, և ի՞նչ կանխարգելիչ միջոցառումներ են իրականացվում:
10. Ի՞նչ ծրագրեր են իրականացվել փախստական և ապաստան հայցող երեխաների համար կրթության հասանելիությունն ապահովելու ուղղությամբ:
11. Աշխատանքներ տարվե՞լ են, արդյոք, մանկական աշխատանքի վերահսկողության համակարգի ստեղծման ուղղությամբ:
12. Բացի վերոհիշյալից, ի կատարումն Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից արված եզրափակիչ դիտարկումների՝ ի՞նչ օրենսդրական ակտերի ընդունման, վարչական միջոցառումների ու հանրային իրազեկման շարունակական աշխատանքներ են կատարվում առ այսօր:
13. Ի կատարումն ՄԻՊ-ի՝ ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ 2018 թ. արտահերթ հրապարակային զեկույցի՝ ի՞նչ միջոցառումներ են իրականացվում:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

*Առողջապահական ծառայությունների հասանելիության ուղղությամբ կատարված միջոցառումներ*

1. Սելեկտիվ աբորտների կանխարգելման ուղղությամբ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելուց բացի՝ ի՞նչ օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտեր են ընդունվել:

2. Ինչպիսի՞ն է վիճակագրական պատկերը՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը ընդունելուց հետո:

3. Վարվու՞մ է, արդյոք, սելեկտիվ աբորտների վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն:

4. Ի տարբերություն Մարդու իրավունքների պաշտպանության ազգային նախորդ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրում սելեկտիվ աբորտների վերաբերյալ միջոցառում նախատեսված չէ: Գործողությունների ծրագրում սելեկտիվ աբորտների վերաբերյալ միջոցառումը չներառելը պայմանավորված է վիճակագրության փոփոխությա՞մբ, թե՞ այլ պատճառներով: Իսկ այլ ռազմավարական ծրագրերում ընդգրկվա՞ծ է:

5. Օրենսդրական արգելքից հետո չե՞ն իրականացվել մշտադիտարկման աշխատանքներ պետական մակարդակով՝ պարզելու համար, թե տվյալ իրավակարգավորումները կիրառվու՞մ են ամբողջ ծավալով, և ի՞նչ ձեռքբերումներ կամ դժվարություններ են գրանցվել դրանց կիրառման արդյունքում՞

6. Բուժաշխատողների հետ աշխատանքներ կամ վերապատրաստման ծրագրեր իրականացվե՞լ են, արդյոք, աբորտից առաջ տրամադրվող խորհրդատվության ծավալի և բովանդակության վերաբերյալ:

7. Սելեկտիվ աբորտների հետ կապված լատենտայնությունը բացահայտելու նպատակով որևէ հետազոտություն/միջոցառում իրականացվե՞լ է, արդյոք:

8. Աբորտ անցկացնելու ժամանակ պատճառը ի՞նչ եղանակով և ի՞նչ փաստաթղթում է նշվում:

9. Երեխայի իրավունքների կոմիտեն տարբեր հրապարակումներում նշում է, որ երեխայի պլանավորման քաղաքականությունն այնպես պետք է մշակվի, որ հնարավոր լինի երեխայի ու հատկապես աղջիկ երեխաների կյանքի սպառնալիքի կանխումը: Երեխայի պլանավորման քաղաքականությունը արդյոք պարունակու՞մ է նման բաղադրիչ:

10. Ի՞նչ ծրագրեր են իրականացվում քաղաքում և գյուղերում առողջապահական ծառայությունների հասանելիությունն ապահովելու նպատակով:

11. Հատկացվե՞լ են, արդյոք, տրանսպորտային/ֆինանսական միջոցներ՝ դեպի գյուղեր մանկաբույժների պարբերական այցերը ապահովելու համար:

12. Ի՞նչ ծրագրեր են իրականացվում, և ի՞նչ միջոցներ են ուղղվում մարզային հաստատություններ՝ սարքավորումներով հագեցնելու համար:

13. Քայլեր արվու՞մ են, արդյոք, մարզային նորածնային բաժանմունքներ ունեցող հաստատությունների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

14. Ավելացվե՞լ է, արդյոք, շտապօգնության բրիգադների քանակը, և վերանայվե՞լ է կայանների տեղեկայվածության հարցը:

15. Բարելավվե՞լ են, արդյոք, նեոնատոլոգների և բուժքույրերի նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմները:

16. Քննարկվու՞մ է նեոնատոլոգների և նեոնատալ բուժքույրերի՝ միջազգային չափանիշներին համապատասխանող մասնագիտական որակավորման չափորոշիչների ներդրման հարցը:

17. Ի՞նչ քայլեր են իրականացվում ոչ պաշտոնական վճարումների պրակտիկան կանխարգելելու ուղղությամբ. օրինակ՝ նախատեսվում է ներդնել ոչ պաշտոնական վճարումների դեպքերի վերաբերյալ անանուն հաղորդումներ ներկայացնելու գործուն համակարգ:

18.Իրականացվու՞մ են, արդյոք, ծրագրեր՝ առողջապահության և կրթության ոլորտների համագործակցությունն ուժեղացնելու ուղղությամբ՝ ծնողներին և երեխաներին ճիշտ սննդակարգի վերաբերյալ տեղեկություններ փոխանցելու հետ կապված:

## ՀԱՎԵԼՎԱԾ 3

*Արդարադատության մատչելիության հետ կապված միջոցառումներ*

1. Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավման ուղղությամբ ի՞նչ միջոցառումներ (օրենսդրական, վարչական և հանրային իրազեկման) են իրականացվել 2017-2022 թթ. դրությամբ:
2. Անչափահասների կալանավորման և խափանման այլ միջոցների վերաբերյալ հստակ ցուցիչներով միասնական վիճակագրություն վարվու՞մ է, արդյոք:
3. Երեխաների անձնական տվյալների պաշտպանության ուղղությամբ ի՞նչ միջոցառումներ են իրականացվել:
4. Քրեակատարողական հիմնարկներում անչափահասների կրթական իրավունքների իրացման ուղղությամբ ի՞նչ միջոցառումներ են կատարվել:
5. Աղջիկների վաղ ամուսնությունների ուսումնասիրման նպատակով խնդրվում է տրամադրել ամուսնությունների վիճակագրական պատկերը 2017-2022 թթ. դրությամբ՝ ըստ տարիքի և ազգային պատկանելության:
6. Միջազգային որդեգրման գործընթացի բարելավման ուղղությամբ ի՞նչ աշխատանքներ են տարվում:
7. Բացի վերոհիշյալից՝ ի կատարումն Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից արված եզրափակիչ դիտարկումների, ի՞նչ օրենսդրական ակտերի ընդունման, վարչական

միջոցառումների ու հանրային իրազեկման շարունակական աշխատանքներ են կատարվում առ այսօր:
8. Ի կատարումն ՄԻՊ-ի՝ ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ 2018 թ. արտահերթ հրապարակային զեկույցի՝ ի՞նչ միջոցառումներ են իրականացվել:

## ՀԱՎԵԼՎԱԾ 4

*Սոցիալական ոլորտում իրականացված միջոցառումներ*

1. Նախատեսվու՞մ է, արդյոք, պետական բյուջեում երեխաների սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված ծախսերի վերանայում (փոփոխություն կամ ավելացում):

2. Ո՞ր փուլում է գտնվում «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքների ընդունումը, «Բազմազավակ ընտանիքների մասին» օրենքի, «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծերի մշակման, հաստատման և ընդունման գործընթացները:

3. Ի՞նչ նոր օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր են ընդունվել՝ ի կատարումն ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեի կողմից ընդունված եզրափակիչ դիտարկումների՝ սկսած 2017 թվականից առ այսօր:

4. Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի աշխատանքների ակտիվացման ուղղությամբ ի՞նչ միջոցառումներ են իրականացվում: Ի՞նչ պարբերականությամբ են հրավիրվում հանձնաժողովի նիստերը:

5. Որպես ընտանեկան բռնության հարաբերություններում լիազոր մարմին՝ ՀՀ ԱՍՀՆ-ն ի՞նչ օրենսդրական ակտեր է ընդունել կամ միջոցառումներ իրականացրել նշված ժամանակահատվածում:

6. Ընտանեկան բռնության մասին օրենքի համաձայն՝ ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառումը (ներառյալ՝ կրթական, առողջապահական հաստատությունների վիճակագրություն) վարում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ ՀՀ կառավարության 10.10.2019 թ. թիվ 1381-Ն որոշմամբ սահմանված կարգով: Արդյոք ավարտվե՞լ են լիազոր մարմնի կողմից կենտրոնացված հաշվառումը միասնական էլեկտրոնային հարթակի կիրառմամբ կազմակերպելու աշխատանքները:

7. Խնդրվում է ներկայացնել ՀՀ ԱՍՀՆ ենթակայության ներքո գտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա հաստատություններում, մանկատներում և գիշերօթիկներում խնամվող երեխաների թիվը:

8. Քաղաքացիական հասարակության կողմից մտահոգություն է հայտնվել, որ Հայաստանի տարածքում չի գործում երեխաների համար *առանձնացված միասնական «թեժ գծի»*

հեռախոսահամար, որը նեղ մասնագետի միջոցով կապահովի այդ ծառայությունը: Արդյոք նախատեսվու՞մ են որոշակի քայլեր այդ ուղղությամբ:

9. Ընտանեկան բռնությունից երեխայի պաշտպանության մշտադիտարկման աշխատանքներում սոցիալական աշխատողի դերի բարձրացման ուղղությամբ ի՞նչ աշխատանքներ են կատարվում:

10. Ի՞նչ քայլեր են կատարվել որդեգրման գործընթացի հաստատման կենտրոնացված համակարգի ստեղծման ուղղությամբ:

11. Ի՞նչ միջոցառումներ են իրականացվել խնամակալության և հոգաբարձության մարմինների վերաբերյալ նշված ժամանակահատվածում:

12. Բացի վերոհիշյալից՝ ի կատարումն Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից արված եզրափակիչ դիտարկումների, ի՞նչ օրենսդրական ակտերի ընդունման, վարչական միջոցառումների ու հանրային իրազեկման շարունակական աշխատանքներ են կատարվում առ այսօր:

13. Ի կատարումն ՄԻՊ-ի՝ ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ 2018 թ. արտահերթ հրապարակային զեկույցի՝ ի՞նչ միջոցառումներ են իրականացվում:

## Օգտագործված աղբյուրների ցանկ

*Նորմատիվ իրավական ակտեր*


1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ քրեական օրենսգիրք
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք
5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք
6. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք.
7. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք
8. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
9. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք
10. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ գործող օրենք
11. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենք

12. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք
13. «Կրթության մասին» ՀՀ օրենք
14. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք
15. «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենք
16. «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենք
17. «Երեխայի իրավունքների պաշտպանության 2022 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 1622–Լ որոշում
18. ՀՀ կառավարության 9 հունիսի 2022 թվականի 847-Ն որոշում Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողությունների կատարմանը ներգրավվող հոգեբանների որակավորման կարգը սահմանելու մասին
19. ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն որոշում «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին կարգ»-ի մասին
20. ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 598-Ն որոշում «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույց»-ի մասին
21. ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում
22. ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշում՝ **«**Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը սահմանելու մասին**»**
23. ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի թիվ 432–Լ որոշում «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին»
24. ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին 2021 թվականի 136-ն ՀՀ կառավարության որոշում
25. ՀՀ կառավարության 23 մայիսի 2019 թվականի N 630-Ն որոշում «Որդեգրել ցանկացող անձանց նախապատրաստական դասընթացների ծրագրի բովանդակությունը, դրան ներկայացվող պահանջները, ծրագրի բովանդակությունը սահմանող իրավասու մարմինը, ծրագրի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին»
26. ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշում «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին»

27. «ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիր» (13.07.2017)

28. ՀՀ կառավարության 2017 թ. փետրվարի 16-ի N 141-Ն որոշմամբ հաստատված՝ հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի

29. ՀՀ կառավարության 2017 թ. 03.09-ի N239-Ն որոշում

30. ՀՀ կառավարության 10.03.2016 թվականի որոշում «Դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին հավանություն տալու մասին»

31. ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ինN 551-Ն որոշում «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N-1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

32. «Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման» ռազմավարությունը (06. 08.2015 թ.)

33. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 797-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական 113 դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիր»

34. ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1426-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրից» բխող 2015-2020 թվականների միջոցառումների ծրագիր

35. 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշում «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազեմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

36. ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 206-Ն որոշմամբ հաստատված կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարություն

37. 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշում «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին»

38. ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի մայիսի 11-ի N 188-Ա հրաման:

*Դատական ակտեր*

39. 2010 թ. Հոկտեմբերի 5-ի՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-919 որոշումը քաղաքացի Իգոր Հակոբջանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով

40. ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ 1333 որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի և 77-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

*Էլեկտրոնային ռեսուրսներ*

41. 0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf (ombuds.am)

42. https://www.weprotect.org/

43. f5dcd3eb211993d573b3aab9bc85ffd9.pdf (ombuds.am) f5dcd3eb211993d573b3aab9bc85ffd9.pdf (ombuds.am)

44. https://nih.am/assets/pdf/atvk/db7aad88a52714a90f6b69ecca6df204.pdf

45.... Եկեք սովորենք երեխայի իրավունքները.pdf (unicef.org)

46.... http://justice.am/storage/uploads/001.Ughecuyc-erexaneri_andznakan_tvyalner.pdf

47. https://www.osf.am/wp-content/uploads/2021/12/Ընտանեկան-բռնության-հարաբերություններում-երեխաների-իրավունքների-պաշտպանության-պրակտիկան-համավարակի-ժամանակահատվածում.pdf

48.. https://epfarmenia.am/sites/default/files/Document/Issues_Related_To_The_Rights_of_And_Opportunities_For_Yezidi_Girls_Residing_In_Armenia_ARM.pdf

Issues_Related_To_The_Rights_of_And_Opportunities_For_Yezidi_Girls_Residing_In_Armenia_ARM.pdf (epfarmenia.am)

49.. poverty_2019_a_2.pdf (armstat.am)

50.. Սոցիալական պաշտպանության համակարգի խորքային ախտորոշում.pdf (unicef.org)

51.... Microsoft Word - e2910f25380af18b6dbd62139c1b4c9f8e59c094f3164743882cb16d4661f6a6 (parliament.am)

52. Արդարադատության Ակադեմիա - Անչափահասների մասնակցությամբ գործերով մասնագիտացված քննիչների վերապատրաստման մոդուլներ (justiceacademy.am)

53. Հաշմանդամություն ունեցող երեխաների խնամատարության հեռանկարները Հայաստանում - EVN Report